

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝
«ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ

«ՕՐԵՆՔԻ ՊԱՏՎԱՐ» գիտամեթոդական ամսագիր
«BULWARK OF LAW» scientific-methodical journal

***Հրատարակվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի
երաշխավորությամբ***

Լրատվական գործունեության իրականացնող՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիր
ՊՈԱԿ, գրանցման վկայական 03Ա085891՝ տրված 15.09.2009թ.

Հասցե՝ Երևան 0004, Ծովակալ Բասկովի պողոտա 29,

Էլեկտրոնային կայք՝ www.edupolice.am,

Էլեկտրոնային փոստ՝ orenqipatvarjournal@mail.ru,

Հեռ. 010-77-15-24

Համարի թողարկման պատասխանատու՝ գլխավոր խմբագրի տեղակալ Ա. Մնացականյան:

Խմբագրությունը կարող է հրապարակել նյութեր՝ համամիտ չլինելով հեղինակների տեսակետներին:

**ОСНОВАТЕЛЬ И ИЗДАТЕЛЬ:
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ
"ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ КОМПЛЕКС ПОЛИЦИИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ"**

"ЗАЩИТНИК ЗАКОНА" научно-методический журнал

*Издается по рекомендации Научного совета Образовательного комплекса
полиции Республики Армения*

Лицо, осуществляющее информационную деятельность: Государственная
некоммерческая организация "Образовательный комплекс полиции Республики
Армения"

Сертификат регистрации- 03U085891, выдан: 15.09.2009 г.

Адрес: Ереван 0004, проспект Адмирала Исакова 29

Официальный сайт: www.edupolice.am

Электронная почта: orenqipatvarjournal@mail.ru

Тел: 010-77-15-24

Ответственный по выпуску номера: Заместитель главного редактора Артак Мнацаканян

Редакция может опубликовать материалы, не соглашаясь с мнениями авторов.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ. **Տիգրան Եսայան - գլխավոր խմբագիր,**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժնի պետ, ոստիկանության կապիտան, ի.գ.թ. **Արտակ Մնացականյան - գլխավոր խմբագրի տեղակալ,**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ **Միրանուշ Պողոսյան-պատասխանատու քարտուղար,**

ՀՀ ոստիկանության պետի գլխավոր խորհրդական, ոստիկանության գնդապետ, ի.գ.դ. **Գրիգոր Բաղիրյան,**

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, արդարադատության գնդապետ, ի.գ.դ., դոցենտ **Արթուր Ղամբարյան,**

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, ի.գ.դ., պրոֆեսոր **Մերգել Առաքելյան**

ՀՀ ոստիկանության շտաբի պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ. **Հովհաննես Քոչարյան**

ՀՀ ոստիկանության ՀԿԼՎ պետ, ոստիկանության գնդապետ **Աշոտ Սևարենյան,**

ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ-ի պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ. **Արա Տիդանյան,**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Գագիկ Գրիգորյան,**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի պետ, ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Մանուկ Սուրաշյան,**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, ոստիկանության մայոր, ի.գ.թ., դոցենտ **Միսակ Մարկոսյան:**

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Первый заместитель начальника Образовательного комплекса полиции Республики Армения, полковник полиции, кандидат юридических наук **Есаян Тигран Микаелович** - *главный редактор*,

Начальник отдела научных работ Образовательного комплекса полиции Республики Армения, капитан полиции, кандидат юридических наук **Мнацаканян Артак Самвелович** - *заместитель главного редактора*,

Заместитель начальника отдела научных работ Образовательного комплекса полиции Республики Армения, подполковник полиции **Погосян Сирануш Гришаевна** - *ответственный секретарь*,

Главный советник начальника Полиции Республики Армения, полковник полиции, доктор юридических наук **Бадирян Григорий Михайлович**,

Заместитель председателя Следственного комитета, полковник юстиции, доктор юридических наук, доцент **Гамбарян Артур Сиреканович**,

Ректор Академии юстиции, доктор юридических наук, профессор **Аракелян Сергей Ваганович**,

Начальник штаба Полиции Республики Армения, полковник полиции, кандидат юридических наук **Кочарян Оганнес Ишханович**,

Начальник Управления по связям с общественностью и информации Полиции Республики Армения, полковник полиции **Агаронян Ашот Сирасович**,

Начальник Национального бюро Интерпола РА, полковник полиции, кандидат юридических наук **Фиданян Ара Хоренович**,

Заместитель начальника академии Образовательного комплекса полиции Республики Армения, полковник полиции, кандидат юридических наук, доцент **Григорян Гагик Таарович**,

Начальник юридического факультета академии Образовательного комплекса полиции Республики Армения, подполковник полиции, кандидат юридических наук, доцент **Мурадян Манук Оганесович**,

Начальник кафедры уголовного права и криминологии академии юридического факультета Образовательного комплекса полиции Республики Армения, майор полиции, кандидат юридических наук, доцент **Маркосян Мисак Меружанович**.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիրը վերջին մեկ տարվա ընթացքում իր կայուն տեղը զբաղեցրեց ինչպես Հայաստանի, այնպես էլ արտասահմանյան մի շարք երկրների գիտական հրատարակչությունների շարքում: Վերջինիս վառ ապացույցը դարձավ բազմաթիվ որակյալ գիտական հոդվածների հոսքը խմբագրություն: Եթե ամփոփենք վերջին մեկ տարվա աշխատանքը, ապա պետք է նշել, որ այս ընթացքում մեր ամսագրի 2 համարներում տպագրվել են շուրջ 31 գիտական հոդվածներ, որոնցից 10-ը հայրենական, իսկ 21 արտասահմանյան հեղինակների կողմից:

Ամսագրերում ընդգրկվել են ինչպես Հայաստանի Հանրապետության տարբեր գերատեսչությունների և ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների, այնպես էլ արտասահմանյան տարբեր երկրների ուստիկանական ԲՈՒՀ-երի (Մոսկվայի, Օմսկի, Վոլգոգրադի, Կրասնոդարի, Սանտկ-Պետերբուրգի, Մինսկի, Մոզիլովի, Թբիլիսիի, Օդեսայի) իրավաբան-գիտնականների գիտական հոդվածները:

Պահպանելով արդեն իսկ ստեղծված ավանդույթը՝ ամսագրի սույն համարում ևս ընդգրկվել են և՛ հայրենական հեղինակների, և՛ արտասահմանյան մեր գործընկերների գիտական հոդվածներ՝ քրեական իրավունքի, կրիմինալոգիայի, կրիմինալիստիկայի, քրեական դատավարության իրավունքի, վարչական իրավունքի և ուսումնական գործընթացի կազմակերպման ոլորտներից:

Հարգանքով՝

**«Օրենքի պատվար» գիտամեթոդական
ամսագրի գլխավոր խմբագիր**

Տիգրան Եսայան

Научно-методический журнал за последний год занял почетное место не только среди армянских, но и зарубежных научных изданий ряда стран, доказательством чего является многочисленный поток качественных научных статей.

Подводя итоги работы за прошедший год, следует отметить, что за указанный период в 2 выпусках нашего журнала было опубликовано более 31 научных статей, в том числе 10 отечественных и 21 зарубежных авторов.

Были представлены труды передовых ученых-юристов из различных ведомств и Высших учебных заведений как Республики Армения, так и Министерств внутренних дел и полиции разных стран. Среди них соответствующие академии и университеты Москвы, Омска, Волгограда, Краснодара, Санкт-Петербурга, Минска, Могилева, Тбилиси, Одессы и т.д.

Поддерживая уже сложившуюся традицию, в данный номер журнала включены научные статьи отечественных и зарубежных авторов, посвященные проблемам уголовного права, криминологии, криминалистики, уголовно-процессуального права, административного права и организации учебного процесса в высших и средних специальных учебных заведениях.

С уважением,

Главный редактор

Тигран Есаян

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Բաղդասարյան Անի

ՄԵՂՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՄԵՂՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ..... 10

Гритенко Оксана Анатольевна

НЕКОТОРЫЕ УГОЛОВНО-ПРАВОВЫЕ АСПЕКТЫ БОРЬБЫ С НЕЗАКОННЫМ
ОБОРОТОМ НАРКОТИЧЕСКИХ СРЕДСТВ, ПСИХОТРОПНЫХ ВЕЩЕСТВ, ИХ
АНАЛОГОВ И ПРЕКУРСОРОВ ПО ЗАКОНОДАТЕЛЬСТВУ УКРАИНЫ 20

Մարկոսյան Միսակ

ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՏԱԾ ԳՈՒՅՔԻՆ ՏԻՐԱՆԱԼՈՒ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ
ԶՊՓԱՆԻՇՆԵՐԸ 25

Մելիքսեթյան Արմինե

ԱՎԱԶԱԿՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ..... 41

Свиридов Станислав Владимирович

СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЙ АНАЛИЗ НОРМ ОБ УГОЛОВНОЙ
ОТВЕТСТВЕННОСТИ ЗА ФАЛЬСИФИКАЦИЮ ДОКАЗАТЕЛЬСТВ ПО
УГОЛОВНОМУ ДЕЛУ ПО ЗАКОНОДАТЕЛЬСТВУ РЯДА ЗАРУБЕЖНЫХ
СТРАН ПОСТСОЦИАЛИСТИЧЕСКОЙ И РОМАНО-
ГЕРМАНСКОЙ ПРАВОВЫХ СЕМЕЙ 52

Стрилец Олег Валентинович

СИСТЕМАТИЗАЦИЯ НАКАЗАНИЙ В УГОЛОВНОМ ЗАКОНОДАТЕЛЬСТВЕ
РОССИИ И АРМЕНИИ 60

Третьякова Наталья Сергеевна, Маракулин Денис Анатольевич

ФОРМИРОВАНИЕ В РОССИЙСКОМ УГОЛОВНОМ ЗАКОНОДАТЕЛЬСТВЕ
X-XIX ВВ. ТЕРМИНОВ «КРАЖА», «ГРАБЕЖ» И «РАЗБОЙ» 69

Осокин Роман Борисович, Кокорев Владимир Геннадьевич

СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЙ АНАЛИЗ НОРМ
ОБ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЗА НАРУШЕНИЕ ПРАВА НА СВОБОДУ
СОВЕСТИ И ВЕРОИСПОВЕДАНИЙ ПО ЗАКОНОДАТЕЛЬСТВУ РОССИИ
И РЯДА ЗАРУБЕЖНЫХ СТРАН..... 76

ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ

Խաչատրյան Հռիփսիմե

ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԶԴԻՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ 86

Плужник Елена Ивановна

КРИМИНОЛОГИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА ПРЕСТУПЛЕНИЙ В СФЕРЕ
ОБОРОТА НАРКОТИЧЕСКИХ СРЕДСТВ, ПСИХОТРОПНЫХ ВЕЩЕСТВ, ИХ
АНАЛОГОВ ИЛИ ПРЕКУРСОРОВ 97

ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ

Աղոյան Մարգարիտա

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ
ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԵՅ ԵՎ ԾԵՐ ՀԱՍԱԿԻ ԱՆՁԱՆՅ ՍՈՏ ԱՌԿԱ ՈՐՈՇ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ 109

Աղայան Ռուբեն

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ «ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-015»-Ի և
«ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-013»-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 122

**Ляпичев Владимир Емельянович, Досова Анна Владимировна,
Задоров Александр Георгиевич**

СОВРЕМЕННЫЙ ПОДХОД К ПОНЯТИЮ И КЛАССИФИКАЦИИ МАТЕРИАЛЬНЫХ
СЛЕДОВ, СВЯЗАННЫХ С ОБСТОЯТЕЛЬСТВАМИ ИЗГОТОВЛЕНИЯ ПОДДЕЛЬНОГО
ДОКУМЕНТА 131

Янин Сергей Александрович

О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ РАССЛЕДОВАНИЯ ПРЕСТУПЛЕНИЙ,
СОВЕРШЕННЫХ С ИСПОЛЬЗОВАНИЕМ СОВРЕМЕННЫХ СРЕДСТВ
МОБИЛЬНОЙ СВЯЗИ 141

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ղամբարյան Արթուր

ՆՅՈՒԹԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ 149

ՎԱՐՉԱՎԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Сургутсков Вадим Игоревич

ГОСУДАРСТВЕННЫЙ ПРАВООХРАНИТЕЛЬНЫЙ КОНТРОЛЬ В СФЕРЕ ОБОРОТА
ОРУЖИЯ В РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ И ЕГО СУБЪЕКТЫ..... 159

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Varicheva Maria

WHY IS IT WRONG TO SAY THAT THE REALISTS WON THE FIRST GREAT
DEBATE IN INTERNATIONAL RELATIONS? 167

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Хачатрян Тигран Мартинович, Восканян Лилит Робертовна

ПРОЦЕСС И СТРУКТУРА УЧЕБНО-МЕТОДИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ В
ОБРАЗОВАТЕЛЬНОМ КОМПЛЕКСЕ ПОЛИЦИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ..... 173

ՄԵՂՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՄԵՂՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ

Բաղդասարյան Անի

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
Ուսումնական կենտրոնի դասախոս,
ոստիկանության ավագ լեյտենանտ

Մեղսունակության և անմեղսունակության իրավական կատեգորիաները վկայում են անձի՝ քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորության կամ անհնարիության մասին: Այդ պատճառով անձի քրեական պատասխանատվության հարցը լուծելիս՝ իրավակիրառողը պետք է վերլուծի ոչ միայն հանցագործության սուբյեկտիվ կողմին և դրա ապացուցված լինելուն վերաբերող հարցեր, այլև հանրորեն վտանգավոր արարքը կատարելու պահին և դրանից հետո անձի և նրա վարքագծի մասին տվյալները:

Մեղսունակությունը հանցագործության սուբյեկտի հիմնական հատկանիշներից է և առանց «մեղսունակություն» և «անմեղսունակություն» հասկացությունների պարզաբանման, գործնականում հնարավոր չէ կենսագործել պատասխանատվության անխուսափելիության և արդարության սկզբունքները:

Հռոմեական իրավունքում հանցագործությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության ենթարկվելու հնարավորությունը կապվում էր անձի՝ իրավաբանորեն նշանակալի հետևանքներ առաջացնող գործողություններ կատարելու հնարավորության հետ: Այլ կերպ ասած՝ քրեաիրավական իմաստով մեղսունակությունը համընկնում էր քաղաքացիաիրավական գործունակության հետ:

Այնուամենայնիվ, դեռևս հռոմեական իրավունքում արդեն ձևավորվել էին դրոյթներ մանկահասակներին և հոգեկան հիվանդներին պատասխանատվության չենթարկելու մասին, սակայն մեղսունակության և անմեղսունակության սահմանումներն ու հատկանիշները ձևավորված չէին: Հռոմեական իրավունքի աղբյուրներում երբեմն օգտագործվում էին «injuriae capax, doli», «culpa capax» կամ «innocentia consilii» ձևակերպումները, որոնք նշանակում

էին տկարամիտ, խելագար¹: Հուստինիանոսի Դիզեստներում ցուցումներ էին բովանդակվում խելագարներին սպանության համար պատժից ազատելու մասին՝ «բավական է, որ նա արդեն պատժված է իր խելագարությամբ»²:

Միջին դարերում առանձնացվում էին հոգեկան խանգարումների 3 խմբեր՝

- Անմեղսունակության հանգեցնող հոգեկան խանգարումներ, օրինակ՝ ծանր տկարամտությունը,
- Մեղսունակությունը չբացառող հոգեկան խանգարումներ, երբ հոգեկան խանգարման հատկանիշները համընկնում էին հանցագործության բնույթի հետ, օրինակ՝ կրոնական առեղծվածային բովանդակությամբ, զառանցանքերով ուղեկցվող խանգարումները, որոնց արդյունքում կատարված ծիսական սպանությունները դասվում էին ամենաձանձուր հանցանքների թվին և պատժվում էին ամենադաժան պատիժներով,
- Հոգեկան խանգարումներ, որոնք չէին բացառում մեղսունակությունը, եթե անձը կատարում էր հանցագործություններ՝ կայսեր, նրա ընտանիքի անդամների և պետության դեմ, և հանգեցնում էին անմեղսունակության, եթե կատարվում էր այլ հանցանք, օրինակ՝ գողություն: Այդպիսի խանգարումների օրինակ էր էպիլեպսիան³:

Ժամանակակից ընկալման մեղսունակության և անմեղսունակության հիմնախնդիրը ձևավորվեց 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին: Դեռևս 18-րդ դարում Արևմտյան Եվրոպայում հոգեկան հիվանդները պատժվում էին ինչպես առողջ մարդիկ: Դատարանի առջև հարց չէր բարձրացվում պարզել, թե արդյո՞ք արարքի կատարման պահին անձը գիտակցում էր իր արարքը:

Եվրոպայում ձևավորված արդարադատության համակարգի փոփոխությունների կոչեր էին անում քրեական իրավունքի դասական դպրոցի ներկայա-

¹ Stiu՝ Игнатов, А.Н. История развития уголовного права / А.Н Игнатов, Ю.А. Красиков. – Москва, 1998, էջ 48:

² Stiu՝ Перетерский И.О. Всеобщая история государства и права. Ч. 1. Древний мир. Вып. 2. Древний Рим. М.: Юридическая литература. 1945. էջ 172:

³ Stiu՝ Богомяков Ю.С. Уголовно-правовая невменяемость: критерии и признаки// Советское государство и право. 1989. № 4, էջ 48:

ցուցիչները, մասնավորապես՝ իտալացի Չեզարե Բեկարիան իր «Հանցագործությունների և պատիժների մասին»⁴ աշխատությունում և ֆրանսիացի բժիշկ-հոգեբույժ Ֆ.Պինելը⁵:

Ֆ.Պինելի գիտական աշխատանքները և պրակտիկ գործունեությունը ոչ միայն բերեցին հոգեբուժարաններում բուժվողների հանդեպ վերաբերմունքի փոփոխության (Ֆրանսիայում հոգեկան հիվանդներին այլևս չէին կապում շղթաներով), այլև ստիպեցին իրավաբաններին մտորել հոգեկան հիվանդների իրենց կատարած արարքների համար պատասխանատվության ենթարկելու հարցերի շուրջ:

Ֆրանսիայի 1810 թ. քրեական օրենսգիրքը պատմության մեջ առաջիններից մեկն էր, որ բացառեց հոգեկան խանգարման վիճակում հանրորեն վտանգավոր արարք կատարած անձանց քրեական պատասխանատվությունը: Մասնավորապես՝ այդ օրենսգրքի 64-րդ հոդվածում նշված էր. «Չկա հանցագործություն, եթե արարքի կատարման պահին անձը գտնվել է ինելագարության վիճակում»⁶: Այսպիսով, առաջացավ անմեղսունակության բժշկական չափանիշը, որի օրենսդրական ձևակերպումը բավականին անկատար էր և չտարբերակված:

Ռուսաստանում միայն 19-րդ դարի վերջին արվեցին մեղսունակության և անմեղսունակության հասկացությունները ձևակերպելու փորձեր: Պատմականորեն ձևակերպվեց անմեղսունակության հասկացությունը, իսկ մեղսունակության առկայությունը պարզվում էր բացառման միջոցով: 1912թ. վերջին Ս.Վ.Պոզնիշևը տվել է մեղսունակության հետևյալ սահմանումը. «Մեղսունակությունը երևույթների պատճառական հարաբերությունները գիտակցելու ունակությունն է՝ առանց խառնելու իրական երևույթների ընկալումներն անիրական պատկերացումների հետ»⁷: Արդեն այն ժամանակ պարզ էր, որ սեփական արարքների փաստացի բնույթը գիտակցելու և դրանք ղեկավարելու ունակությունն է այն սահմանազատող չափանիշը, որով մեղսունակությունը տարբերվում է անմեղսունակությունից:

⁴ Stu` Беккариа Ч. О преступлениях и наказаниях. М.: Юрлитиздат. 1939. էջ 196:

⁵ Stu Ющенко А.И. Основы учений о преступнике, душевнобольном и психологии нормального человека. М.: Спарк. 1997. էջեր 15-16:

⁶ Stu` Есаков Г.А., Крылова Н.Е., Серебренникова А.В. Уголовное право зарубежных стран: Учебное пособие. Москва, Проспект, 2011, էջ 150:

⁷ Stu`Игнатов А.Н. История развития уголовного права / А.Н.Игнатов, Ю.А.Красиков. – Москва, 1998, էջ 56:

Սահմանափակ մեղսունակության մասին առաջին անգամ նշվում է գերմանական պետությունների քրեական օրենսգրքերում՝ Բրաունշվեյգի 1840թ., Սաքսեն-Ալտենբուրգի 1841թ., Գեսսենի 1841թ. և Բադենի 1845թ.: Այդ իրավական ակտերում որպես սահմանափակ մեղսունակությունը պայմանավորող գործոններ նշվում էին տկարամտությունը, անբավարար զարգացվածությունը, ծերունական մտավոր տկարությունը, հարբածությունը, դաստիարակության բացարձակ բացակայությունը: Որպես սահմանափակ մեղսունակության քրեաիրավական հետևանք հանդես էր գալիս պատժի մեղմացումը:

Ավելի ուշ շրջանում սահմանափակ մեղսունակությունը սկսեց դիտարկվել որպես պատիժը մեղմացնող հանգամանք նաև որոշ այլ արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությամբ, մասնավորապես՝ Շվեդիայի 1964թ. քրեական օրենսգրքի 6-րդ պարագրաֆով, Դանիայի 1986թ. քրեական օրենսգրքի 39-րդ պարագրաֆով և Ֆինլանդիայի 1889թ. քրեական օրենսգրքով: Նշված բոլոր օրենսգրքերը գտնվում էին քրեական իրավունքի դասական դպրոցի ազդեցության տակ (Ի.Բենտամ, Ա.Ֆեյերբախ), որի ընդհանուր մոտեցումն այն էր, որ մեղսունակությունն անխզելիորեն կապված է մեղքի հետ և ուլ ավելի քիչ մեղք է դրսևորում, նա այնքան մեղմ պատժի պետք է ենթարկվի⁸:

Բոլորովին այլ էին քրեական իրավունքի սոցիոլոգիական դպրոցի ներկայացուցիչների դիրքորոշումները: Արևմտյան Եվրոպայում այդ դպրոցի ներկայացուցիչներ էին Լիստը, Թարդը, Պրինսը, ովքեր 1889թ. ստեղծեցին Քրեագետների միջազգային միությունը, որը գործեց մինչև 1914թ. և անցկացրեց 12 նիստ: Մի շարք նիստերում քննարկվում էր նաև սահմանափակ մեղսունակության հիմնախնդիրը⁹:

Սոցիոլոգիական դպրոցի մեթոդաբանական հիմքը պոզիտիվիզմի տեսությունն էր: Որպես հանցավորության պատճառ՝ սոցիոլոգիական դպրոցի ներկայացուցիչները դիտում էին հանցագործի վտանգավոր վիճակը, ըստ որի հանցանք կատարած անձինք բաժանվում էին 2 խմբի.

1. Պատահական հանցագործներ, ովքեր հանցանք են կատարում արտաքին գործոնների ազդեցությամբ,

⁸ Stu` Спасенников Б.А. Субъект преступления: уголовно-правовой и медико-психологический аспекты. Автореферат диссертации на соискание ученой степени доктора юридических наук. Екатеринбург., 2001, էջ 28:

⁹ Stu` Люблинский П.И. Суд и права личности: Сборник статей / Под ред. Давыдова Н.В., Полянского Н.Н. М.: Статут. 2005. էջեր 32-70:

2. Սովորական հանցագործներ, ովքեր հանցանք են կատարում իրենց ներքին հասկությունների, գլխավորապես՝ հոգեկան շեղումների պատճառով:

Հանցագործի հոգեկան շեղումների և հանցավորության պատճառների միջև ուղիղ կապի առանձնացումը սոցիոլոգիական դպրոցի ներկայացուցիչներին հիմք է տվել յուրովի մեկնաբանել մեղսունակության և սահմանափակ մեղսունակության հասկացությունները:

Մասնավորապես՝ սահմանափակ մեղսունակության վիճակում հանցանք կատարած անձինք սոցիոլոգիական դպրոցի ներկայացուցիչների կողմից դասակարգվում էին «վտանգավոր» և «նվազ վտանգավոր» խմբերի: Վտանգավոր հանցագործների համար առաջարկվում էր ոչ միայն հատուկ բանտային ռեժիմ, այլև անվտանգության միջոցների կիրառում նախքան հանցանք կատարելը: Սահմանափակ մեղսունակության վիճակի առկայությունն անխզելիորեն կապվում էր վտանգավոր վիճակի առկայության հետ: Եվ հենց այս մոտեցումներ էր ընդունվել Քրեագետների միջազգային միության 1910 և 1913թթ. նիստերում¹⁰:

Ինչ վերաբերվում է հայկական իրավական մտքի և օրենսդրության զարգացման պատմության մեջ մեղսունակության և անմեղսունակության վերաբերյալ գաղափարներին, ապա պետք է նշել, որ որոշ ընդհանրական կարգավորումներ կարելի է տեսնել դեռևս Մխիթար Գոշի Դատաստանագրքում: Մասնավորապես՝ Դատաստանագրքի «ՃՀԱ» գլուխը վերնագրված է՝ «Դիվահարի մասին, ով մարդ է սպանում»: Այդ գլխում նշված է՝ «Հարցում. Եթե մեկը դիվահարվելիս մարդ է սպանում, այնժամ, երբ դևից սրբվի, իբրև սպանող պարտավոր է ապաշխարհել, թե չէ: Պատասխան. Փոքր ինչ, որովհետև արածը չարից է եղել: Նույնը լինի նաև այն մտախաբկանքների մեջ ընկածների համար: Եվ հոգևոր դատաստանի համաձայն, եթե նմանները իրենք իրենց և կամ այլոց, ապա առանց ապաշխարհության չման»: Սակայն այս դատաստանը մարմնավոր/աշխարհիկ դատավորների համար չէ»¹¹:

Ինչպես տեսնում ենք, դեռևս Մխիթար Գոշն է տարբերակված մոտեցում ցուցաբերել հոգեպես հիվանդների և առողջների նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառմանը, նշելով, որ հոգեկան խանգարումների

¹⁰ Տես՝ Станкевич В. Борьба с опасным состоянием как основная задача нового уголовного права // Новые идеи в правоведении. М.: Спарк. 1996. էջ 113:

¹¹ Տես՝ Մխիթար Գոշ: Դատաստանագիրք: Երևան, 2001, էջ 123:

վիճակում սպանություն կատարած անձինք չպետք է պատասխան տան աշխարհիկ դատարանի առջև: Հատկանշական է այն հանգամանքը, որ այդ ժամանակ գործող կրոնական պատկերացումների ազդեցությամբ և գերիշխանությամբ, հոգեկան խանգարումները մեկնաբանվում էին որպես չար ուժերի ազդեցության հետևանք, դիվահարություն:

Հայրենական օրենսդրության պատմության մեջ անմեղսունակության բնորոշումն առաջին անգամ տրվեց ՀՍՍՀ 1961թ. քրեական օրենսգրքի 11-րդ հոդվածում: Այդ հոդվածում սահմանվում էր՝ «Քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, ով հանրորեն վտանգավոր արարքը կատարելու պահին գտնվելիս է եղել անմեղսունակության վիճակում, այսինքն՝ խրոնիկական հոգեկան հիվանդության, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման, տկարամտության կամ այլ հիվանդագին վիճակի հետևանքով չէր կարող հաշիվ տալ իրեն իր գործողությունների համար կամ ղեկավարել այդ գործողությունները: Այդպիսի անձի նկատմամբ՝ դատարանի նշանակմամբ, կարող են կիրառվել սույն օրենսգրքի 53-56 հոդվածներով նախատեսված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները»:

Համեմատելով ՀՍՍՀ 1961թ. քրեական օրենսգրքի 11-րդ հոդվածի և ՀՀ 2003թ. քրեական օրենսգրքի 25-րդ հոդվածի առաջին մասի ձևակերպումները՝ կարելի է ասել, որ անմեղսունակության բժշկական և իրավաբանական չափանիշի օրենսդրական նկարագրությունը ձևավորվել է արդեն 1961թ. օրենսգրքում, իսկ 2003թ. քրեական օրենսգրքում դրա օրենսդրական բնորոշման տարբերությունները կրում են սույն խմբագրական, տեխնիկական բնույթ:

Հատկանշական է, որ ՀՍՍՀ 1961թ. քրեական օրենսգրքի 11-րդ հոդվածում իրավական կարգավորման էր ենթարկված նաև ղեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց քրեական պատասխանատվության հարցը. «Պատժի ենթակա չէ նաև այն անձը, որը հանցագործությունը կատարել է մեղսունակության վիճակում, սակայն մինչև դատարանի կողմից դատավճիռ կայացնելը՝ հիվանդացել է հոգեկան հիվանդությամբ, որը զրկել է նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու կամ այդ գործողությունները ղեկավարելու հնարավորությունից: Այդպիսի անձի նկատմամբ՝ դատարանի նշանակմամբ, կարող են կիրառվել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ, իսկ առողջանալուց հետո նա կարող է ենթակա լինել պատժի»:

Դրա հետ մեկտեղ, ՀՍՍՀ 1961թ. քրեական օրենսգրքում որևէ նշում չկար սահմանափակ մեղսունակության վերաբերյալ, ինչպես նաև այսպես կոչված

«տարիքային անմեղսունակության» վերաբերյալ: Այդ 2 հասկացությունները օրենսդրորեն ամրագրվեցին 2003թ. ՀՀ քրեական օրենսգրքում: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, եթե անձը հասել է տվյալ հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված տարիքի, սակայն մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով ընդունակ չի եղել ամբողջ չափով գիտակցել իր արարքի բնույթն ու նշանակությունը կամ ղեկավարել դա, ապա նա ենթակա չէ քրեական պատասխանատվության: Ինչ վերաբերում է սահմանափակ մեղսունակությանը, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 26-րդ հոդվածը սահմանում է, որ մեղսունակ անձը, ով հանցանքը կատարելիս հոգեկան խանգարման հետևանքով չէր կարող ամբողջությամբ գիտակցել իր գործողության (անգործության) փաստացի բնույթն ու հասարակական վտանգավորությունը կամ ղեկավարել դա, ենթակա է քրեական պատասխանատվության: Սահմանափակ մեղսունակությունը, որպես մեղմացնող հանգամանք, հաշվի է առնվում պատիժ նշանակելիս և կարող է հիմք դառնալ պատժի հետ միաժամանակ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց նշանակելու համար:

Այսպիսով, ամփոփելով մեղսունակության և անմեղսունակության վերաբերյալ պատմաիրավական ուսումնասիրության արդյունքները՝ կարելի է փաստել, որ հայկական իրավական մտքի պատմության մեջ ընդհանրական կարգավորումներ կարելի է տեսնել դեռևս Մխիթար Գոշի Դատաստանագրքում: Դրանում Մխիթար Գոշը տարբերակված մոտեցում է ցուցաբերել հոգեպես հիվանդների և առողջների նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառմանը, նշելով, որ հոգեկան խանգարումների վիճակում սպանություն կատարած անձինք չպետք է պատասխան տան աշխարհիկ դատարանի առջև: Հատկանշական է այն հանգամանքը, որ այդ ժամանակ գործող կրոնական պատկերացումների ազդեցությամբ և գերիշխանությամբ՝ հոգեկան խանգարումները մեկնաբանվում էին որպես չար ուժերի ազդեցության հետևանք, դիվախարություն: Իսկ համեմատելով ՀՍՍՀ 1961 թ. քրեական օրենսգրքի 11-րդ հոդվածի և ՀՀ 2003 թ. քրեական օրենսգրքի 25-րդ հոդվածի առաջին մասի ձևակերպումները՝ կարելի է ասել, որ անմեղսունակության բժշկական և իրավաբանական չափանիշի օրենսդրական նկարագրությունը ձևավորվել է արդեն 1961թ. օրենսգրքում, իսկ 2003թ. քրեական օրենսգրքում դրա օրենսդրական բնորոշման տարբերությունները կրում են սոսկ խմբագրական, տեխնիկական բնույթ:

Մեղսունակության և անմեղսունակության իրավական կատեգորիաները վկայում են անձի՝ քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորության կամ անհնարինության մասին: Այդ պատճառով անձի քրեական պատասխանատվության հարցը լուծելիս՝ իրավակիրառողը պետք է առաջին հերթին վերլուծի ոչ միայն հանցագործության սուբյեկտիվ կողմին և դրա ապացուցված լինելուն վերաբերող հարցեր, այլև հանրորեն վտանգավոր արարքը կատարելու պահին և դրանից հետո անձի և նրա վարքագծի մասին տվյալները:

ՄԵՂՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՄԵՂՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՑԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Բաղդասարյան Անի

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
Ուսումնական կենտրոնի դասախոս,
ոստիկանության ավագ լեյտենանտ

Մեղսունակությունը հանցագործության սուբյեկտի հիմնական հատկանիշներից է և առանց «մեղսունակություն», «անմեղսունակություն» հասկացությունների պարզաբանման, գործնականում հնարավոր չէ կենսագործել պատասխանատվության անխուսափելիության և արդարության սկզբունքները:

Հոդվածում հեղինակը համակողմանի ներկայացրել է մեղսունակության և անմեղսունակության ընդհանուր բնութագիրը, մասնավորապես՝ նշված ոլորտի վերաբերյալ օրենսդրության զարգացումը, զուգահեռներ է անցկացրել արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության ոլորտը կարգավորող դրույթների հետ:

Բանալի բառեր. մեղսունակություն, անմեղսունակություն, սահմանափակ մեղսունակություն, հոգեկան խանգարումներ, հոգեկան հիվանդ, քրեական պատասխանատվություն, տկարամտություն, պատժի մեղմացում, հանրորեն վտանգավոր արարք, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ:

РАЗВИТИЕ ОТЕЧЕСТВЕННОГО И ЗАРУБЕЖНОГО ЗАКОНОДАТЕЛЬСТВА О ВМЕНЯЕМОСТИ И НЕВМЕНЯЕМОСТИ

Багдасарян Ани Завеновна

преподаватель Учебного центра Образовательного
комплекса полиции Республики Армения,
старший лейтенант полиции

Правовые категории "вменяемости" и "невменяемости" свидетельствуют о возможности или невозможности привлечения лица к уголовной ответственности. Поэтому при решении вопроса привлечения лица к уголовной ответственности, необходимо проанализировать не только субъективную сторону преступления и круг вопросов, относящихся к доказанности преступления, но и данные, относящиеся к особенностям поведения лица до и после совершения общественно опасного деяния.

Вменяемость является одним из основных признаков субъекта преступления, и без разъяснения понятий "вменяемости" и "невменяемости", невозможно практическое осуществление принципов ответственности и справедливости.

Автор статьи всесторонне представил общие характеристики вменяемости и невменяемости, проследил развитие законодательства в данной области, а также привел сравнения с положениями, регулирующими сферу законодательства, действующими в зарубежных странах.

Ключевые слова: вменяемость, невменяемость, ограниченная вменяемость, душевные расстройства, душевнобольной, уголовная ответственность, слабоумие, смягчение наказания, общественно опасное деяние, способы принуждения медицинского свойства.

THE DEVELOPMENT OF PATRIOTIC AND FOREIGN LEGISLATION ABOUT IMPUTABILITY AND NON IMPUTABILITY

Baghdasaryan Ani

Lecturer of the Training Center of the Educational
Complex of Police of the Republic of Armenia,
Police Senior Lieutenant

Legal categories of "sanity" and "insanity" testify to the possibility or impossibility of bringing a person to criminal liability. Therefore, solving the issue of criminal liability, it is necessary to analyze not only the subjective side of the crime and the range of issues related to the evidence of the crime, but also data relating to the characteristics of the person's behavior before and after committing a socially dangerous act.

The sanity is the main feature of the subject of crime and without explanation of the following concepts "sanity" and "insanity" it is impossible to realize the principles of justice and inevitability of responsibility.

In this article the author presents a comprehensive description of insanity and sanity, particularly, the development of legislation, as well as draws a parallel with provisions regulating criminal legislation of foreign countries.

Keywords: sanity, insanity, criminal liability, evidence of the crime, socially dangerous act.

НЕКОТОРЫЕ УГОЛОВНО-ПРАВОВЫЕ АСПЕКТЫ БОРЬБЫ С НЕЗАКОННЫМ ОБОРОТОМ НАРКОТИЧЕСКИХ СРЕДСТВ, ПСИХОТРОПНЫХ ВЕЩЕСТВ, ИХ АНАЛОГОВ И ПРЕКУРСОРОВ ПО ЗАКОНОДАТЕЛЬСТВУ УКРАИНЫ

Гриценко Оксана Анатольевна

Заведующий кафедры уголовного права и
криминологии Одесского государственного
университета внутренних дел,
кандидат юридических наук, доцент,
майор полиции

Классическим выражением методов уголовно-правового противодействия преступлениям является уголовное наказание, которое, по нашему мнению, и в дальнейшем должно оставаться основным методом меры воздействия на преступность. Средства уголовного наказания имеют наибольший эффект воздействия по сравнению с другими средствами. Другими средствами уголовно-правового противодействия преступлениям, кроме уголовной ответственности и наказания, являются:

- стимулирование участия граждан в борьбе с преступностью (институты необходимой обороны, задержания преступника);
- стимулирование добровольного отказа от доведения преступления до конца;
- поощрения лиц, совершивших преступление, к действительному раскаянию и исправлению.

Поиск новых методов и средств противодействия преступности является актуальной социально-правовой проблемой. Изобретение простых и действенных мер противодействия преступности определит, прежде всего, новую парадигму правового регулирования общественных отношений, которые возникают, находят свое развитие и завершаются в сфере уголовного законодательства. Так, действенной формой противодействия является применение не только тех мер, которые заменяют или дополняют уголовное наказание, но и таких, которые исключают уголовное преследование, освобождают от уголовной ответственности, в общем, смягчают уголовную ответственность путем правового поощрения.

Термин «поощрительная уголовно-правовая норма», обозначающий определенное правило поведения, соблюдение которого стимулируется смягчением или

полным устранением уголовно-правовых последствий в связи с социально одобряемым поведением лица, сравнительно недавно появился в отечественной юридической литературе.

В этой связи очевидно, что выделение комплекса поощрительных юридических предписаний в качестве самостоятельного вида норм является особой классификацией, которая имеет преимущественно социально-политическое значение и построена по специфическому критерию - характеру социального воздействия, призванного вызвать данное поведение. Суть такой классификации состоит в разграничении норм на поощрительные и проводящие прямое государственное воздействие [1, С. 80-82].

Своеобразный характер социального воздействия на сознание и волю лица, призванного стимулировать правопослушный вариант поведения, бесспорно, является важнейшим отличительным свойством данных норм. Столь же бесспорным является тот факт, что такие нормы не имеют цель принудить лицо к определенному поведению, а поощряют, одобряют и стимулируют его.

Разумеется, уголовно-правовое поощрение, как следствие применения поощрительных уголовно-правовых норм, есть весьма действенный стимул коррекции человеческого поведения, способный изменить данное поведение даже тогда, когда угроза наказания оказывается бессильной. В связи с этим тот интерес, который проявлялся юридической наукой к проблеме исследования этого феномена, представляется далеко не случайным.

Поощрительные уголовно-правовые нормы имеют ярко выраженный предупредительный характер, а также способствуют быстрому и полному раскрытию преступлений. Система этих норм показывает, что кроме запретов и обязательств, законодатель может использовать также и позволяющий метод уголовно-правового регулирования, особой разновидностью которого является поощрение. Практика борьбы с преступностью свидетельствует о том, что подкрепление норм, предусматривающих ответственность за преступное деяние, правовым предписанием поощрительного характера существенно повышает значение криминального закона в профилактике преступлений [2, С.81].

К поощрительным нормам положительного постпреступного поведения можно отнести специальные виды освобождения лица от уголовной ответственности после совершения им преступлений. Среди поощрительных норм в действующем УК Украины отдельное место занимает ч. 4 ст. 307, которая предусматривает освобождение от уголовной ответственности лиц, совершивших незаконное производство, изготовление, приобретение, хранение, перевозку, пересылку наркотических средств, психотропных веществ, их аналогов без квалифицирующих призна-

ков, если лицо добровольно сдало наркотические средства, психотропные вещества или их аналоги, а также указало источник их приобретения или содействовало раскрытию преступлений, связанных с незаконным оборотом.

Указанная норма имеет значительную профилактическую направленность. Она стимулирует, с одной стороны, действенное раскаяние лица, совершившего незаконные действия с наркотическими средствами и психотропными веществами, их аналогами, с другой - способствует раскрытию преступлений, связанных с нарушением законодательства по борьбе с наркотизмом. Применение ст. 307 УК Украины дает возможность получать дополнительные положительные результаты при проведении оперативно-розыскных, следственных и профилактических мероприятий в борьбе с преступлениями, связанными с незаконным оборотом наркотиков в Украине.

Таким образом, в отношении лиц, совершивших деяния, связанные с незаконным оборотом (в частности, перевозкой и пересылкой) наркотических средств или психотропных веществ, их аналогов на территории Украины, в действующем законодательстве содержится норма, которая склоняет этих правонарушителей к сотрудничеству с правоохранительными органами « в обмен » на освобождение от уголовной ответственности (ч.4 ст.307 УК).

Действующее уголовное законодательство Украины регламентирует норму, в которой устанавливается уголовная ответственность за незаконное перемещение наркотических средств, психотропных веществ, их аналогов или прекурсоров, или фальсифицированных лекарственных средств через таможенную границу Украины (контрабанда) - ст.305 УК. Указанная статья близко граничит с нормами, которые предусматривают уголовную ответственность за незаконный оборот наркотических средств и психотропных веществ, так как не только посягает на общий установленный порядок перемещения через таможенную границу Украины материальных ценностей, но и, прежде всего, создает угрозу причинения вреда не менее важному объекту – здоровью населения.

Следует отметить, что значительная часть наркотиков, психотропных веществ и сырья для их изготовления попадают в Украину именно контрабандным путем. Борьба с наркотизмом во всех проявлениях является одним из приоритетных направлений государственной политики борьбы с преступностью. Противодействие проникновению наркотиков через границы Украины - задача не менее важная, чем борьба с их распространением на территории Украины.

Таким образом, на наш взгляд, необходимым является дополнение поощрительной нормой ст. 305 УК Украины по аналогии ст. 307 УК Украины, в следующей редакции: ч. 4 ст.305 УК - добровольная сдача наркотических средств или психотропных веществ, их аналогов или прекурсоров или фальсифицированных ле-

карственных средств; добровольное указание источника их приобретения или содействие в раскрытии преступления, связанного с незаконным оборотом (в том числе и с контрабандой) этих предметов, освобождает лицо от уголовной ответственности.

Поиск новых, действенных мер предотвращения распространения незаконного оборота наркотических средств, в частности, дополнение ст.305 УК Украины поощрительной нормой будет способствовать, на наш взгляд, более эффективной борьбе с контрабандным распространением наркотических средств, позволит ускорить проведение оперативно-розыскных и следственных действий по делам о контрабанде наркотиков и психотропных веществ, а также способствовать розыску и изобличению преступников. Кроме названных преимуществ, предложенная поощрительная норма обеспечит повышение эффективности профилактической деятельности.

СПИСОК ИСПОЛЬЗОВАННОЙ ЛИТЕРАТУРЫ:

1. Алексеев С.С. Общая теория права: Курс в 2-х томах. - М.: Юридическая литература, 1982. - Т. 2. - 359 с.
2. Елеонский В.А. Поощрительные нормы уголовного права и их значение в деятельности органов внутренних дел. Хабаровск, 1984. - 108 с.
3. Кримінальний кодекс України: прийнятий 5 квітня 2001р. №2341-III: [набрав чинності 1 вересня 2001р.]: із змінами і доповненнями станом на 01.09.2016 [Електронний ресурс] // Режим доступу :<http://portal.rada.gov.ua>.

НЕКОТОРЫЕ УГОЛОВНО-ПРАВОВЫЕ АСПЕКТЫ БОРЬБЫ С НЕЗАКОННЫМ ОБОРОТОМ НАРКОТИЧЕСКИХ СРЕДСТВ, ПСИХОТРОПНЫХ ВЕЩЕСТВ, ИХ АНАЛОГОВ И ПРЕКУРСОРОВ ПО ЗАКОНОДАТЕЛЬСТВУ УКРАИНЫ

Грищенко Оксана Анатольевна

Заведующий кафедры уголовного права и криминологии Одесского государственного университета внутренних дел,
кандидат юридических наук, доцент,
майор полиции

В статье рассматриваются уголовно-правовые аспекты борьбы с незаконным оборотом наркотических средств, психотропных веществ, их аналогов и прекурсо-

ров по законодательству Украины. Автор выделяет как средство уголовно-правового противодействия преступлениям, стимулирование участия граждан в борьбе с преступностью с помощью поощрительных норм. Автором предлагается введение поощрительной нормы в ст. 305 УК Украины.

Ключевые слова: уголовно-правовое противодействие, уголовная ответственность, незаконный оборот наркотических средств, контрабанда, наркотизм.

CERTAIN CRIMINAL ASPECTS OF COMBATING ILLICIT TRAFFICKING IN NARCOTIC DRUGS, PSYCHOTROPIC SUBSTANCES, THEIR ANALOGUES AND PRECURSORS UNDER THE UKRAINIAN LEGISLATION

Gritenko Oksana

Head of the Department of Criminal Law and Criminology
of Odessa's State University of Internal Affairs of Ukraine,
PhD in Law, Associate Professor,
Police Major

The article deals with criminal law aspects of the fight against illicit trafficking in narcotic drugs, psychotropic substances, their analogues and precursors under the laws of Ukraine. The author identifies as a means of criminally-legal counteraction to crimes, stimulation of participation of citizens in the fight against crime by means of incentive norms. The author suggests the introduction of incentive regulations in Art. 305 of the Criminal Code of Ukraine.

Keywords: criminal-legal opposition, criminal liability, drug trafficking, smuggling, drug addiction.

ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՏԱԾ ԳՈՒՅՔԻՆ ՏԻՐԱՆԱԼՈՒ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Մարկոսյան Միսակ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և
քրեաբանության ամբիոնի պետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ոստիկանության մայոր

Հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման գործընթացում քրեաիրավական և քաղաքացիաիրավական ոլորտների սահմանագատման խնդիրներից մեկը հափշտակության և գտած գույքին տիրանալու տարանջատումն է: Այդ խնդրի ճիշտ լուծման կարևորությունը պայմանավորված է նրանով, որ հափշտակության և գտած գույքին տիրանալու սահմանագատման հստակ չափանիշների առանձնացումը թույլ է տալիս խուսափել այնպիսի իրավիճակներից, երբ անձն անհիմն կերպով քրեական պատասխանատվության է ենթարկվում ընդամենը քաղաքացիաիրավական պարտականությունների չկատարման համար:

1961 թ. ՀՄՄՀ քրեական օրենսգրքի 86-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն էր սահմանում գույքի գաղտնի հափշտակման (գողության համար), իսկ 95-րդ հոդվածը՝ գտած կամ պատահամար հանցավորի տիրապետությանն անցած պետական կամ հանրային արժեքավոր գույքի յուրացման համար: 2003 թ. ՀՀ քրեական օրենսգրքի ընդունմամբ գտած կամ պատահամար հանցավորի տիրապետությանն անցած գույքի յուրացումն ապաքրեականացվեց, իսկ գողության հանցակազմի շրջանակները չընդլայնվեցին: Դա նշանակում է, որ գործող քրեական օրենսգրքի պայմաններում գտած կամ պատահամար հանցավորի տիրապետությանն անցած գույքի յուրացման համար պատասխանատվություն սահմանող նորմի բացակայությունը չի կարող «փոխհատուցվել» գողության վերաբերյալ նորմի տարածական մեկնաբանությամբ. դա կհամարվի քրեական օրենքի կիրառում անալոգիայով: Հետևաբար, անհրաժեշտ է հստակ առանձնացնել հափշտակության և գտած գույքին տիրանալու սահմանագատման չափանիշները:

Մասնագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել հափշտակության և գտած գույքին տիրանալու սահմանազատման տարբեր չափանիշների:

Այսպես, ըստ **Գ.Ա. Կրիզերի հափշտակության և գտած գույքին տիրանալու տարբերությունն** այն է, որ գտած գույքին տիրանալու դեպքում գույքի սեփականատերն¹ իր մեղքով է կորցնում գույքի նկատմամբ փաստացի տիրապետումը, և այդ գույքը, դուրս գալով սեփականատիրոջ գույքային ֆոնդից, դառնում է տիրագուրկ²: Ա.Ա. Պինանի կարծիքով, գտած գույք է համարվում այնպիսի գույքը, որը վերջնականապես դուրս է եկել սեփականատիրոջ տիրապետումից տարբեր պատճառներով, սակայն առանց գտնողի մասնակցության, այսինքն՝ առանց վերջինիս այնպիսի գործողությունների կատարման, որոնք կարող են գնահատվել որպես գույքին տիրանալ³:

Համանման դիրքորոշում է արտահայտել նաև Ա.Վ.Շուլցան, ըստ որի՝ հափշտակության դեպքում հանցավորն իր ակտիվ գործողություններով գույքը հանում է սեփականատիրոջ գույքային ֆոնդից և սկսում ապօրինի տիրապետել այն, իսկ գտանքի դեպքում անձը տիրանում է այնպիսի գույքի, որն արդեն դուրս է եկել սեփականատիրոջ տիրապետումից՝ անկախ վերջինիս կամքից և գործողություններից⁴:

Միննույն ժամանակ Ա.Վ.Շուլցան տարբերություն է դնում կորցրած և մոռացված գույքի միջև: Մոռացված գույքը գտնվում է այնպիսի վայրում, որը հայտնի է սեփականատիրոջը, և նա հնարավորություն ունի վերադառնալ և վերցնել կամ այլ կերպ վերադարձնել այդ գույքը: Այդ հիմքով մոռացված գույքը կարող է հանդիսանալ հափշտակության առարկա, եթե հանցավորը գիտակցել է, որ սեփականատերը կվերադառնա իր գույքը վերցնելու համար: Ըստ հեղինակի՝ սեփականատիրոջ կողմից իրեն հայտնի վայրում (հյուրանոց, վագոնի խցիկ, հաստատության շենք և այլն) մոռացված գույքին տիրանալը պետք է

¹ Սույն հոդվածում <<սեփականատեր>> ասելով՝ նկատի ունենք նաև գույքի այլ օրինական տիրապետողներին:

² Տե՛ս *Кризер Г.А.* Квалификация хищений социалистического имущества. М., 1974. էջ 45-46:

³ Տե՛ս *Пинаев А.А.* Уголовно-правовая борьба с хищениями. Харьков, 1975. էջ 51-52:

⁴ Տե՛ս *Шульга А.В.* Объект и предмет преступлений против собственности в условиях рыночных отношений и информационного общества. М., 2007. էջ 63:

որակել որպես հափշտակություն, եթե հանցավորը գիտակցել է սեփականատիրոջ կողմից իր գույքը վերցնելու նպատակով վերադառնալու հնարավորությունը⁵:

Վերոնշյալ մոտեցման կողմնակից է նաև Վ. Խիլյուտան, ըստ որի՝ գտած գույքին տիրանալը կարող է որակվել որպես հափշտակություն հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1. Գույքի սեփականատերը հստակ գիտի, թե որտեղ է գտնվում իր գույքը,
2. Գույքը գտած անձն այդ պահին հավաստի կերպով գիտի, թե ում է պատկանում գույքը կամ ողջամիտ հիմքեր ունի ենթադրելու, թե որտեղ է գույքի սեփականատերը և որ վերջինս կարող է գալ գույքի հետևից⁶:

Ա.Գ.Բեզվերիխովի կարծիքով՝ հափշտակությունը բացակայում է կորցրած գույքին տիրանալու դեպքում: Ըստ հեղինակի՝ կորցրած գույք է համարվում այնպիսի գույքը, որը սեփականատիրոջ գույքային ֆոնդից դուրս է եկել վերջինիս կամքից անկախ (իր մեղքով կամ պատահական հանգամանքների ուժով), և նրան հայտնի չէ գույքի գտնվելու վայրը: Թեև գույքը կորցնելը չի ենթադրում սեփականության իրավունքի դադարում, բայց դիտարկվում է որպես գույքի տիրապետման դադարում, այդ պատճառով կորցրած գույքին տիրանալը չի կարող որակվել որպես հափշտակություն⁷:

Ի.Ս.Տիշկևիչը և Ա.Բ.Տիշկևիչը հափշտակությունը և գտած գույքին տիրանալը սահմանազատելիս՝ կարևորում են նաև անձի մոտ գույքին տիրանալու դիտավորության ծագման պահը, եթե անձի մոտ ուրիշի գույքին տիրանալու դիտավորությունը ծագել է նախքան դրա՝ սեփականատիրոջ գույքային ֆոնդից դուրս գալը, և հանցավորն իր դիտավորության իրականացման համար կատարել է որոշակի գործողություններ, ապա արարքը գնահատվում էր որպես հափշտակություն⁸:

Ա.Բ.Բոյցովը կարևորում է նաև այն հանգամանքը, թե արյոյո՞ք գույքը գտնողին հայտնի է դրա սեփականատերը: Ըստ հեղինակի՝ տիրագուրկ գույքին տիրացած անձի արարքն իր հոգեբանական բնութագրով էականորեն

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 66:

⁶ Տե՛ս *Хилюта В.* Присвоение потерянных и забытых вещей // Уголовное право. - М.: АНО "Юридические программы", 2010, № 1. - էջ 48:

⁷ Տե՛ս *Безверхов А.Г.* Имущественные преступления. Самара, 2002. էջեր 214- 215:

⁸ Տե՛ս *Тишкевич И.С., Тишкевич С.И.* Квалификация хищений имущества. Мн., 1996. էջ 26:

տարբերվում է այն անձի արարքից, ով տիրացել է այնպիսի գտած գույքին, որի սեփականատերը հայտնի է, նույնիսկ եթե վերջինս կորցրել, այլ ոչ թե մոռացել է իր գույքը⁹:

Գտած գույքին տիրանալու և հափշտակության սահմանազատման հարցը քննարկելիս՝ նպատակահարմար ենք համարում անդրադառնալ նաև որոշ արտասահմանյան երկրների քրեական իրավունքում այդ խնդրի լուծման մոտեցումներին:

Մեծ Բրիտանիայի քրեական իրավունքում գտած իրերին տիրանալու իրավաբանական գնահատականի հարցը սերտորեն կապված է անազնվության չափանիշի հետ: Այսպես, գողությունը բացակայում է, եթե անձը, տիրանալով գտած գույքին, ենթադրում է, որ դրա սեփականատիրոջը հնարավոր չէ հայտնաբերել ողջամիտ եղանակով (բացակայում է անազնվության չափանիշը)¹⁰:

ԱՄՆ քրեական իրավունքում գործում է կորցրած կամ մոռացված գույքին տիրանալու իրավաբանական գնատահատականի հետևյալ մոտեցումը: Կորցրած կամ մոռացված գույքին տիրացած անձը ենթակա է պատասխանատվության հափշտակության համար հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1. Եթե անձի մոտ գույքին տիրանալու ցանկությունը ծագել է հենց գույքը գտնելու պահին,
2. Եթե անձը գույքը գտնելու պահին գիտի, թե ո՞վ է գույքի սեփականատերը կամ, ելնելով գույքի բնույթից կամ այն գտնելու հանգամանքներից, ողջամիտ հիմքեր ունի ենթադրելու, թե որտեղ է նա գտնվում¹¹:

ԱՄՆ դատական նախադեպերից մեկում ձևակերպված է հետևյալ կանոնը.

- եթե գույքը գտած անձը չգիտի, թե ո՞վ է դրա սեփականատերը կամ ինչպե՞ս է հնարավոր նրան գտնել, ապա նա պարտավոր չէ փնտրել սեփականատիրոջը՝ հայտարարություններ հրապարակելու կամ տեղեկություններ փնտրելու միջոցով¹²:

⁹ Տե՛ս *Бойцов А.И.* Преступления против собственности. СПб., 2002. էջ 246:

¹⁰ www.lia.net.ru/info/jurisprudence/php?n=79 (վերջին այցելության ամսաթիվը՝ 05.04.2016թ.):

¹¹ Տե՛ս *Козочкин И.Д.* Уголовное право США: успехи и проблемы реформирования. СПб., 2007. էջ 380:

¹² Տե՛ս *Уголовное право зарубежных государств. Особенная часть: Учеб. пособие / Под ред. И.Д. Козочкина. М., 2004. էջ 139:*

Ինչպես տեսնում ենք, անգլոսաքսոնական իրավական համակարգում գտած գույքին տիրանալու և հափշտակության սահմանազատման չափանիշը գույքը գտնողի կողմից դրա պատկանելիության գիտակցման փաստն է: Այդ պատճառով հափշտակությունը բացակայում է, եթե գույքը գտած անձը գիտակցում է, որ գույքի սեփականատերը չի կարող հայտնաբերվել ողջամիտ ճանապարհով:

Ֆրանսիայի իրավակիրառ պրակտիկայում գործում է այն մոտեցումը, որ հափշտակության առարկա չեն այն իրերը, որոնք չեն պատկանում ոչ ոքի (*res nullius*): Խոսքն այնպիսի գույքի մասին է, որից սեփականատերը հրաժարվել է: Կորցրած գույքն այդ կատեգորիային չի պատկանում և դրան տիրանալը ուրակվում է որպես հափշտակություն: Միևնույն ժամանակ գործնականում բարդություններ են առաջանում այն հարցի պարզման կապակցությամբ, թե արդո՞ք գտած գույքին տիրացած անձը գիտակցել է, որ գույքը կորցրած է, և սեփականատերը չի հրաժարվել իր գույքից: Օրինակ՝ թանկարժեք իրերին տիրանալու դեպքում ենթադրվում է, որ դրանք կորցրած են, այլ ոչ թե դեն նետված¹³:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության գործող քրեական և քաղաքացիական օրենսդրության տեսանկյունից գտած գույքին տիրանալու և հափշտակության սահմանազատմանը, ապա այդ նպատակով նախ անհրաժեշտ է վերլուծել հափշտակության հասկացությունը և այն քաղաքացիաիրավական նորմերը, որոնք կարգավորում են տիրագուրկ, դեն նետված և կորցրած գույքի հետ կապված հարաբերությունները:

Հափշտակության հասկացությունը տրվել է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Ղափլիթ Ղամբարյանի և այլոց գործի վերաբերյալ 2013 թ. սեպտեմբերի 13-ի որոշման մեջ. «Հափշտակություն ասելով հասկացվում է՝ ուրիշի գույքն ապօրինի անհատույց շահադիտական նպատակով վերցնելը կամ այն հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը, եթե հանցավորն այդ գույքը տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել»¹⁴:

Տիրագուրկ, դեն նետված և կորցրած գույքի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝

¹³ Տե՛ս *Клепицкий И.А.* Имущественные преступления (сравнительно-правовой аспект) // Законодательство. 2000. № 2. էջեր 73-74:

¹⁴ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թ. սեպտեմբերի 13-ի որոշումը ԵԿԴ/0087/01/12 գործի վերաբերյալ, 31-րդ կետ:

քաղ.օր.) 11-րդ գլխում («Սեփականության իրավունք ձեռք բերելը») ամրագրված նորմերով:

Տիրագուրկ գույքի հասկացությունը տրված է քաղ.օր. -ի 178-րդ հոդվածի առաջին մասում՝ տիրագուրկ է համարվում այն գույքը, որը չունի սեփականատեր, որի սեփականատերն անհայտ է կամ հրաժարվել է դրա նկատմամբ սեփականության իրավունքից:

Դեն նետված գույքը հանդիսանում է տիրագուրկ գույքի տեսակ: Այսպես՝ քաղ.օր. ի 179-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է. «Շարժական գույքը, որը սեփականատերը լքել է կամ դրա նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարվելու նպատակով թողել է այլ կերպ (դեն նետված գույք), այլ անձինք կարող են վերածել իրենց սեփականության՝ սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով»: Նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ «Անձը, ում սեփականության, տիրապետման կամ օգտագործման ներքո գտնվող հողամասում, ջրավազանում կամ այլ օբյեկտում, կամ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափից ակնհայտ ցածր արժեք ունեցող դեն նետված գույք կամ դեն նետված մետաղների ջարդոն, խոտանված արտադրանք, օգտակար հանածոների արդյունահանման ժամանակ առաջացած լցակույտեր, արտադրական և այլ թափոններ, իրավունք ունի այդ գույքը վերածել իր սեփականության՝ ձեռնամուխ լինելով դրա օգտագործմանը կամ կատարելով գույքը սեփականության վերածելու այլ գործողություններ: Դեն նետված այլ գույքն անցնում է այն տիրապետող անձի սեփականությանը, եթե այդ անձի դիմումի հիման վրա դատարանը գույքը ճանաչում է տիրագուրկ»:

Ինչ վերաբերում է կորցրած գույքին, ապա ըստ քաղ.օր.-ի 181-րդ հոդվածի առաջին մասի՝ կորցրած գույքը գտնողը պարտավոր է այդ մասին անհապաղ հայտնել գույքը կորցրած անձին կամ գույքի սեփականատիրոջը, կամ իրեն հայտնի որևէ այլ անձի, որն իրավունք ունի ստանալ այդ գույքը և վերադարձնել այն: Եթե գույքը գտնվել է շենքում կամ տրանսպորտում, այն պետք է հանձնվի այդ շենքի կամ տրանսպորտի միջոցի սեփականատիրոջը կամ տիրապետողին: Այդ դեպքում անձը, ում հանձնվում է գտանքը, ձեռք է բերում գույքը գտնող անձի իրավունքները և կրում է նրա պարտականությունները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե գույքը վերադարձնելու պահանջի իրավունք ունեցող անձը կամ նրա գտնվելու վայրն անհայտ է, գույքը գտնող անձը պարտավոր է գտանքի մասին հայտնել ոստիկանություն կամ տեղական ինքնակառավարման մարմին:

Քաղ. օր. -ի 182-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գույքը գտնողն իրավունք ունի այն ստանալու իրավագործություն ունեցող անձից գույքի արժեքի մինչև 20 %-ի չափով վարձատրություն պահանջել գտանքի համար: Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ վարձատրության իրավունքը չի ծագում, եթե գույքը գտնողը չի հայտնել գտանքի մասին կամ փորձել է թաքցնել այն:

Քաղ.օր. -ը, որպես կորցրած գույքի առանձնահատուկ դրսևորում, համանման կերպով կարգավորել է նաև առանց հսկողության թողնված կենդանիների հարցը (183-185-րդ հոդվածներ):

Այսպիսով, ընդհանրացնելով գտած գույքին տիրանալու և հափշտակության սահմանազատման չափանիշների վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ և արտասահմանյան երկրների քրեական իրավունքում առկա մոտեցումները, ինչպես նաև հայրենական օրենսդրության համապատասխան դրույթները՝ կարելի է անել հետևյալ եզրահանգումները:

Մեր կարծիքով՝ գույքը գտնողի համար դրա սեփականատիրոջ հայտնի լինելը կամ չլինելը չի կարող հանդիսանալ հափշտակության և գտած գույքին տիրանալու սահմանազատման չափանիշ: Գույքը գտնողի համար դրա սեփականատիրոջ հայտնի լինելը գտնողին պարզապես պարտավորեցնում է այդ մասին անհապաղ հայտնել նրան (քաղ.օր.-ի 181-րդ հոդվածի 1-ին մաս), սակայն այդ քաղաքացիաիրավական պարտականության չկատարման համար գործող քրեական օրենսդրությամբ պատասխանատվություն սահմանված չէ¹⁵:

Այն գույքը, որը գտնողի տեսանկյունից կարելի է անվանել գտած գույք, սեփականատիրոջ տեսանկյունից կարող է ունենալ հետևյալ կարգավիճակները՝ դեռ նետված գույք, կորցրած գույք, մոռացված գույք կամ ժամանակավորապես առանց հսկողության թողնված գույք:

Պեն նետված է համարվում այն գույքը, որը սեփականատերը լքել է կամ դրա նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարվելու նպատակով թողել է այլ կերպ (օրինակ՝ աղբամանի մեջ զցած կոշիկները, խնջույքից հետո անտառում թողնված սնունդը և այլն):

¹⁵ ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծով նախատեսվում է քրեականացնել սխալմամբ անձին փոխանցված կամ հանձնված գույքը չվերադարձնելը, ինչպես նաև գտանքը չվերադարձնելը:

Կորցրած է համարվում այն գույքը, որը սեփականատիրոջ տիրապետումից դուրս է եկել՝ առանց վերջինիս դիտավորյալ **գործողությունների** և նրան հայտնի չէ գույքի գտնվելու կոնկրետ վայրը (օրինակ՝ գրպանից ընկած թղթադրամը, բեռնատար մեքենայի ընթացքի ժամանակ դրա թափքից ընկած ցեմենտի պարկը և այլն):

Մոռացված է համարվում այն գույքը, որը սեփականատերը դիտավորությամբ թողել է կոնկրետ վայրում՝ հետագայում (կոնկրետ պահին) վերցնելու նպատակով, սակայն մոռացել է նախատեսված պահին վերցնել այն և նրան հայտնի է գույքի գտնվելու կոնկրետ վայրը (օրինակ՝ սուպերմարկետում գնորդն իր պայուսակը դնում է պահարանի մեջ, որպեսզի առևտուր կատարելուց հետո վերցնի այն, սակայն հասնելով տուն՝ հիշում է, որ պայուսակը թողել է պահարանում):

Եթե անձը չի կարողանում հիշել, թե կոնկրետ որտեղ է թողել իր գույքը, ապա դա ոչ թե մոռացված, այլ կորցրած գույք է: Կորցրած պետք է համարել նաև այն գույքը, որը թեև սեփականատերը դիտավորությամբ թողել է կոնկրետ վայրում՝ հետագայում (կոնկրետ պահին) վերցնելու նպատակով, սակայն մոռացել է նախատեսված պահին վերցնել այն, և չի կարող հաստատապես համոզված լինել, որ գույքը գտնվում է հենց այն վայրում, որտեղ նա թողել է այն (օրինակ՝ անձը մետրոյի վագոնից դուրս գալիս՝ իր պայուսակը մոռանում է վագոնի նստարանի վրա և միայն տուն հասնելուց հետո է հիշում, որ պայուսակը թողել է մետրոյի վագոնում): Այլ կերպ ասած՝ մոռացված գույքի դեպքում սեփականատերը ոչ միայն գիտի գույքը թողնելու կոնկրետ վայրը, այլև համոզված է, որ գույքը դեռևս գտնվում է այդ վայրում և հնարավորություն ունի վերադառնալ և վերցնել իր գույքը:

Ճամանակավորապես առանց հսկողության թողնված է համարվում այն գույքը, որը սեփականատերը դիտավորությամբ թողել է կոնկրետ վայրում՝ հետագայում (կոնկրետ պահին) վերցնելու նպատակով (օրինակ՝ անձը հեծանիվը թողնում է խանութի մուտքի մոտ, որպեսզի մտնի խանութ, ուղևորը պայուսակը թողնում է ավտոկայանի սպասասրահում, որպեսզի գնա զուգարան և այլն):

Պարզ է, որ դեռ նետված գույքին տիրանալը չի կարող որակվել որպես հափշտակություն, քանի որ բացակայում է հափշտակության օբյեկտը, մասնավորապես՝ հափշտակության առարկայի իրավաբանական հատկանիշը:

Մեր կարծիքով, հափշտակության առարկա կարող է լինել միայն մոռացված և ժամանակավորապես առանց հսկողության թողնված գույքը, իսկ կորցրած գույքին տիրանալու պարագայում հափշտակությունը բացակայում է: Այդ մոտեցումը հիմնավորվում է նրանով, որ մոռացված և ժամանակավորապես առանց հսկողության թողնված գույքը դեռևս գտնվում է սեփականատիրոջ տիրապետման ներքո, իսկ կորցրած գույքը համարվում է սեփականատիրոջ տիրապետումից դուրս եկած գույք:

Մեր մոտեցումը հիմնավորելու համար, փորձենք բացահայտել «գույքի տիրապետում» հասկացության բովանդակությունը:

Դեռևս հռոմեական մասնավոր իրավունքում տիրապետումը՝ *possessio*, բնորոշվում էր որպես գույքի նկատմամբ անձի փաստացի իշխանություն, որը գուցորդված է այդ գույքի լիիրավ տերը լինելու ցանկությամբ: Տիրապետման կառուցվածքում առանձնացվում էին երկու տարրեր՝ փաստացի տիրապետումը (*corpus possessionis*) և տիրապետման կամքը (*animus possidendi*):

Հռոմեական մասնավոր իրավունքի վաղ աղբյուրներում փաստացի տիրապետում (*corpus possessionis*) էր համարվում գույքի նկատմամբ անմիջական ֆիզիկական իշխանությունը, երբ անձը հնարավորություն ունի իրականացնել գույքի նկատմամբ ուղղակի վերահսկողություն (օրինակ՝ տանը քնած մարդը չի կարող վերահսկել իր գույքը, որը գտնվում է տան բակում): Մակայն հետագայում ձևավորվեց փաստացի տիրապետման առավել հստակեցված և ճկուն բնութագրում. «*corpus possessionis*» առկա է բոլոր այն դեպքերում, երբ սովորական պայմաններում անձը հնարավորություն ունի երկար և անխոչընդոտ մնալ գույքի փաստացի տեր: Օրինակ՝ հռոմեական իրավունքում ընդունված էր, որ ընտանի կենդանիները գտնվում են տիրոջ փաստացի տիրապետման տակ այնքան ժամանակ, քանի դեռ ունեն գոմը վերադառնալու սովորություն և հնարավորություն: Եթե գյուղացին իր կովն առավոտյան խառնում է գյուղի նախրին, ապա նա չի կորցնում կովի նկատմամբ տիրապետումը, թեև օրվա ընթացքում ուղղակի վերահսկողություն չի իրականացնում կովի նկատմամբ: Տիրապետումը կդադարի, եթե կովը մոռանա դեպի գոմ ճանապարհը կամ կովին գողանան: Կամ, օրինակ, եթե անձը գնում է գույք, որը գտնվում է պահեստում, ապա տիրապետումը սկսվում է այն պահից, երբ նա ստանում է պահեստի բանալիները: Մեկ այլ օրինակ՝ սովորական է համարվում այն իրավիճակը, երբ հագուստը գտնվում է զգեստապահարանում, տան բակում չորանում է պարանի վրա կամ հանձնված է լվացքատուն: Այդ ժամանակ *corpus*

possessionis առկա է: Բայց, եթե տիրուհին որոշի լվացքը չորացնել գիշերը և ոչ թե տան բակում, այլ ճանապարհի մոտ, ապա ոչ ոք չի ասի, որ դա սովորական է հագուստի համար, հետևաբար, այդ ժամանակահատվածում փաստացի տիրապետումը դադարում է: Այլ կերպ ասած՝ փաստացի տիրապետումը (*corpus possessionis*) գույքի նկատմամբ անձի վերաբերմունքի այնպիսի վիճակն է, որը նորմալ է համարվում գույքի այդ տեսակի սովորական տիրոջ համար¹⁶:

Տիրապետման իրականացման եղանակները չեն սահմանափակվում միայն գույքը ֆիզիկապես պահելով (*corpore et tactu*): Տիրապետումն առկա է նաև այն դեպքերում, երբ գույքը գտնվում է սեփականատիրոջ տանը կամ նրան պատկանող շինությունում, հողամասում, այլ իրերի մեջ, հագուստում, մարմնի վրա, այնպիսի վայրում, որը հայտնի չէ կողմնակի անձանց: Տիրապետման իրականացման եղանակներ կարող են համարվել նաև գույքի ամրացումն անշարժ գույքին, անձամբ կամ այլ անձանց միջոցով հսկելը և այլն: Փաստացի տիրապետումը կապված չէ գույքը ֆիզիկապես բռնելու հետ, փաստացի տիրապետումն առկա է, եթե սովորական պայմաններում անձն ունի գույքի նկատմամբ իր վերահսկողությունը տևականորեն և անխոչընդոտ իրականացնելու հնարավորություն¹⁷: Դեռևս 19-րդ դարի վերջին գերմանացի իրավագետ Ռուդոլֆ ֆոն Իերինգը տիրապետումը բնորոշում էր որպես սեփականության տեսանկյունից¹⁸:

Ժամանակակից քաղաքացիական իրավունքում գույքի տիրապետումը բնորոշվում է որպես գույքի գտնվելը սեփականատիրոջ տնտեսական իշխանության ներքո¹⁹: Գույքի տիրապետումը համարվում է դադարեցված, եթե անձն այլևս փաստացի հնարավորություն չունի իր գույքի նկատմամբ իրականացնել սեփական կամքը²⁰:

Երբ խոսում ենք տիրապետման մասին, ապա նկատի ունենք որոշակի փաստական վիճակ, այն է՝ գույքի գտնվելն անձի փաստացի հսկողության

¹⁶ Տե՛ս *Зайков А. В.* Римское частное право в систематическом изложении: Учебник / А. В. Зайков. — М.: Русский Фонд Содействия Образованию и Науке, 2012. — էջեր 234-235:

¹⁷ Տե՛ս *И. Б. Новицкий Римское право*, Ассоциация «Гуманитарное знание» «ТЕИС» Москва 2002, էջեր 61-65:

¹⁸ Տե՛ս *Р. Иеринг* Об основании защиты владения. М., 1883, էջ 144:

¹⁹ Տե՛ս *Բարսեղյան Տ.* Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս (երրորդ հրատակություն): ԵՊՀ, Երևանի համալս. հրատ., 2006, էջ 286:

²⁰ Տե՛ս *Богданчиков С.В.* Уголовно-правовые и криминологические аспекты преступлений против собственности. Монография. М., Юнитидана: Закон и право, 2011, էջ 64:

տակ²¹: Եթե սեփականատերը կորցրել է իր գույքը և չգիտի դրա գտնվելու կոնկրետ վայրը, ապա նա այլևս փաստացի հնարավորություն չունի գույքի նկատմամբ իրականացնել սեփական կամքը, ուստի այդպիսի գույքը պետք է համարել սեփականատիրոջ տիրապետումից դուրս եկած:

Ինչպես գիտենք, հափշտակության հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է արարքի և հետևանքի միջև պատճառական կապը: Որպես արարք հանդես է գալիս գույքը վերցնելը և այն հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը: Մասնագիտական գրականության մեջ ուրիշի գույքը վերցնել ասելով՝ հասկացվում է սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի՝ տվյալ գույքի նկատմամբ ունեցած տիրապետումը այս կամ այն եղանակով դադարեցնելը²²: Որպես հետևանք՝ հափշտակության հանցակազմում հանդես է գալիս սեփականատիրոջ գույքային ֆոնդի պակասումը, որի հաշվին հանցավորի գույքային ֆոնդը լրացվում է: Այսինքն՝ հափշտակության մեղսագրման համար անհրաժեշտ է հաստատել, որ սեփականատիրոջ գույքային ֆոնդը պակասել է հենց հանցավորի կողմից գույքը վերցնելու հետևանքով²³: Ելնելով վերոգրյալից՝ կարելի է փաստել, որ կորցրած գույքին տիրանալու դեպքում, բացակայում է հափշտակության օբյեկտիվ կողմը:

Ինչ վերաբերում է մոռացված և ժամանակավորապես առանց հսկողության թողնված գույքին տիրանալուն, ապա, մեր կարծիքով, հափշտակությունն այդ դեպքերում առկա է, քանի որ անձը տիրանում է այնպիսի գույքին, որը դեռևս գտնվում է սեփականատիրոջ տիրապետման ներքո: Ե՛վ գույքը մոռանալու, և՛ այն ժամանակավորապես առանց հսկողության թողնելու դեպքում, սեփականատերն իր գույքը որոշակի վայրում դիտավորյալ կերպով թողնելով՝ շարունակում է իրականացնել գույքի նկատմամբ կամային վերահսկողություն, քանի որ հաստատապես գիտի գույքի գտնվելու կոնկրետ վայրը և հնարավորություն ունի վերադառնալ գույքի հետևից:

²¹ Տե՛ս **Չ. Միկչյան** Տիրապետում. իրավունք, թե՛ փաստ/Օրենք և իրականություն, 2010, թիվ 9 (179), էջ 11:

²² Տե՛ս Богданчиков С.В. Նշվ. աշխ., էջ 63:

²³ Թերևս այդ առումով որպես հակափաստարկ կարող է բերվել ավագակության ձևական հանցակազմը, սակայն մենք համակարծիք ենք այն հեղինակներին, ըստ որոնց՝ ավագակությունը նույնպես անհրաժեշտ է սահմանել որպես նյութական հանցակազմով հանցագործություն: Տես, օրինակ, **Барсукова И.Г.** Уголовно-правовая и криминологическая характеристика разбоя. Дис.канд. юрид. наук. М., 2005. էջեր 49-51:

Այլ կերպ ասած՝ մոռացված գույքին տիրանալու և կորցրած գույքին տիրանալու տարբերությունն այն է, որ կորցրած գույքի դեպքում բացակայում է տիրապետման սուբյեկտիվ բաղադրիչը. սեփականատերը չգիտի, թե կոնկրետ որտեղ է գտնվում իր գույքը, իսկ մոռացված գույքի դեպքում գույքի գտնվելու վայրը հայտնի է սեփականատիրոջը, և նա հնարավորություն ունի վերադառնալ գույքի հետևից, ուստի գույքի տիրապետման ռեժիմը պահպանվում է:

Միևնույն ժամանակ, գտած գույքին տիրանալու ճիշտ իրավաբանական գնահատական տալու համար անհրաժեշտ է պարզել գույքը գտնողի սուբյեկտիվ ընկալումը: Մասնավորապես՝ մոռացված կամ ժամանակավորապես առանց հսկողության թողնված գույքին տիրացած անձը կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել հափշտակության համար միայն այն դեպքում, եթե վարույթն իրականացնող մարմինը հաստատված կհամարի, որ նա գիտակցել է, որ տիրանում է հենց մոռացված կամ ժամանակավորապես առանց հսկողության թողնված, այլ ոչ թե դեն նետված կամ կորցրած գույքին:

Սակայն գտած գույքին տիրացած անձի սուբյեկտիվ ընկալումը պարզելը գործնականում բավականին բարդ է, քանի որ գույքը գտնողը կարող է չիմանալ՝ սեփականատերը գույքը դեն է նետել, կորցրել է, մոռացել, թե՛ ժամանակավորապես թողել է առանց հսկողության: Նման հանգամանքներն էապես դժվարեցնում են անձի մոտ ուրիշի գույքի հափշտակության դիտավորության հիմնավորման հնարավորությունը:

Մեր պատկերացմամբ՝ գտած գույքին տիրացած անձի սուբյեկտիվ ընկալումը բացահայտելիս՝ վարույթն իրականացնող մարմինը պետք է հաշվի առնի այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են.

1. Գույքի վիճակը (սարքին կամ անսարք լինելը, ամբողջական կամ մասնատված լինելը),
2. Գույքի արտաքին տեսքը (մաշվածությունը, գունաթափությունը, վնասված լինելը),
3. Գույքի արժեքը,
4. Գույքի գտնվելու վայրը,
5. Տվյալ վայրում գույքի գտնվելու ժամանակահատվածի տևողությունը,
6. Տվյալ վայրում և ժամանակահատվածում գույքի պահպանության կամ պաշտպանության փաստը (օրինակ՝ պայուսակը թողնվել է սուպերմարկետի փակ պահարանում, հեծանիվը հատուկ լարով ամրացվել է

մետաղյա ձողին, լողափում թողնված բջջային հեռախոսը ծածկվել է արբիչով),

7. Տվյալ վայրում և ժամանակահատվածում գույքի գտնվելու փաստի սովորական (ընդունված) լինելը (օրինակ՝ ցերեկային ժամին խանութի մուտքի մոտ մանկասայլակը թողնելու փաստը սովորական է, իսկ նույն վայրում գետնին ընկած դրամապանակը՝ ոչ):

Եթե նշված հանգամանքների համակցությունը գնահատելու արդյունքում վարույթն իրականացնող մարմինը հաստատված կհամարի, որ գույքը վերցնող անձը գիտակցել է, որ այն դեն նետված է, և պահպանված են քաղ. օր.-ի 179-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, ապա նա ենթակա չէ ո՛չ քրեական, և ո՛չ էլ քաղաքացիաիրավական պատասխանատվության:

Եթե վարույթն իրականացնող մարմինը հաստատված կհամարի, որ գույքը վերցնող անձը գիտակցել է, որ այն մոռացված է կամ ժամանակավորապես թողնված է առանց հսկողության, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության հափշտակության համար:

Իսկ եթե վարույթն իրականացնող մարմինը հաստատված կհամարի, որ գույքը վերցնող անձը գիտակցել է, որ այն կորցրած է, ապա նրա համար կարող է առաջանալ միայն քաղաքացիաիրավական պատասխանատվություն (համաձայն քաղ. օր. -ի 1092-րդ հոդվածի՝ անձի վրա կորվի անհիմն հարստացումը վերադարձնելու պարտականություն, ինչպես նաև նա կգրվի քաղ. օր.-ի 182-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ գտանքի համար վարձատրություն պահանջելու իրավունքից):

Ամփոփելով նյութը՝ նշենք, որ հափշտակության և գտած գույքին տիրանալու սահմանազատման նշված չափանիշները կիրառելիս՝ անհրաժեշտ է հաշվի առնել նաև փաստական սխալի դեպքում արարքի որակման կանոնները: Մասնավորապես՝ եթե անձը որոշակի օբյեկտիվ և իրական հանգամանքներից ելնելով սխալմամբ կարծել է, թե տիրանում է մոռացված կամ ժամանակավորապես առանց հսկողության թողնված գույքին (այսինքն՝ կատարում է հափշտակություն), սակայն իրականում այդ գույքը դեն նետված է կամ կորցրած, ապա նա պետք է քրեական պատասխանատվության ենթարկվի հափշտակության փորձի համար: Իսկ եթե անձը որոշակի օբյեկտիվ և իրական հանգամանքներից ելնելով սխալմամբ կարծել է, թե տիրանում է դեն նետված կամ

կորցրած գույքին, սակայն իրականում այդ գույքը մոռացված է կամ ժամանակավորապես առանց հսկողության թողնված, ապա նա ենթակա չէ քրեական պատասխանատվության:

ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՏԱԾ ԳՈՒՅՔԻՆ ՏԻՐԱՆԱԼՈՒ ՄԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Մարկոսյան Միսակ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և
քրեաբանության ամբիոնի պետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ոստիկանության մայոր

Հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման գործընթացում քրեաիրավական և քաղաքացիաիրավական ոլորտների սահմանագատման խնդիրներից մեկը հափշտակության և գտած գույքին տիրանալու տարանջատումն է: Այդ խնդրի ճիշտ լուծման կարևորությունը պայմանավորված է նրանով, որ հափշտակության և գտած գույքին տիրանալու սահմանագատման հստակ չափանիշների առանձնացումը թույլ է տալիս խուսափել այնպիսի իրավիճակներից, երբ անձն անհիմն կերպով քրեական պատասխանատվության է ենթարկվում ընդամենը քաղաքացիաիրավական պարտականությունների չկատարման համար:

Հեղինակը, ընդհանրացնելով իրավաբանական գրականության և արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության մեջ նշված խնդրի լուծման վերաբերյալ արտահայտված տարբեր մոտեցումները, ինչպես նաև հայրենական օրենսդրության համապատասխան դրույթները, շարադրում է սեփական առաջարկությունները հափշտակության և գտած գույքին տիրանալու սահմանագատման վերաբերյալ:

Բանալի բառեր. հափշտակություն, հափշտակության առարկա, գտանք, դեն նետված գույք, կորցրած գույք, սեփականության իրավունք, տիրապետում, պատճառական կապ, քաղաքացիաիրավական պատասխանատվություն, քրեական պատասխանատվություն:

КРИТЕРИИ РАЗГРАНИЧЕНИЯ ХИЩЕНИЯ ОТ ЗАВЛАДЕНИЯ НАЙДЕННЫМ ИМУЩЕСТВОМ

Маркосян Мисак Меружанович

начальник кафедры уголовного права и криминологии
Академии Образовательного комплекса
полиции Республики Армения
кандидат юридических наук, доцент,
майор полиции

Одной из задач разграничения уголовно-правовых и гражданско-правовых сфер регулирования общественных отношений является отграничение хищения от завладения найденным имуществом. Важность правильного решения данной задачи состоит в том, что выделение четких критериев разграничения хищения от завладения найденным имуществом позволяет избежать таких ситуаций, когда лицо необоснованным образом привлекается к уголовной ответственности за несовершение лишь гражданско-правовых обязанностей.

Автор, обобщив разные подходы к решению данной проблемы, высказанные в юридической литературе и уголовном праве зарубежных стран, а также соответствующие положения отечественного законодательства, излагает собственные предложения по разграничению хищения от завладения найденным имуществом.

Ключевые слова: хищение, предмет хищения, находка, брошенная вещь, потерянная вещь, право собственности, владение, причинная связь, гражданско-правовая ответственность, уголовная ответственность.

THE BENCHMARKS OF DELIMITATION OF THEFT AND ACQUISITION OF FOUND PROPERTY

Markosyan Misak

*Head of the Chair of Criminal Law and Criminology,
Academy of Educational Complex of Police of the Republic of Armenia,
Associate professor, PhD in Law
Police Major*

The delimitation of theft and acquisition of found property is one of the most important issues for differentiation of Criminal Law and Civil Law spheres of public relations regulation. The importance of correct solution of this problem is conditioned by necessity to except situations when a natural person could be unreasonably subjected to criminal responsibility for non-performance of his/her Civil Law obligations.

Summarizing different approaches, available in specialized literature and Criminal Law of foreign countries, as well as provisions of Armenian legislation, the author has introduced his own proposals on benchmarks of delimitation of theft and acquisition of found property.

Keywords: theft, theft items, found property, abandoned property, lost property, right of ownership, possession, causality, civil liability, criminal responsibility.

ԱՎԱԶԱԿՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Մեղքսեղան Արմինե

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
ոստիկանության փոխգնդապետ

Հափշտակության ամենավտանգավոր եղանակը համարվում է ավազակությունը, որը ոստնձգում է երկու օբյեկտների. մի կողմից՝ սեփականության, մյուս կողմից՝ կյանքի ու առողջության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների դեմ:

Աշխարհի գրեթե բոլոր երկրներում հափշտակությունները բաժանվում են երկու խմբի՝ գողություններ (ընդ որում դրա մեջ մտնում է նաև ոչ բռնի կողոպուտը) և հափշտակության բռնի ձևեր, որը հաճախ բնորոշվում է *ограбление*¹ տերմինով²:

Միայն ԱՊՀ երկրների քրեական օրենսգրքերում է, որ հափշտակության առանձին ձևերը հստակ տարանջատված են, այդ թվում առանձնացված է ավազակությունը՝ որպես հափշտակության առավել վտանգավոր եղանակ:

Իսկ ահա ռոմանոգերմանական իրավական համակարգի երկրների քրեական օրենսգրքերին ընդհանրապես հայտնի չէ ավազակություն տերմինը: Դրա փոխարեն կիրառվում են *հասարակ կամ ծանր* *ограбление* հասկացությունները: Գերմանիայի քրեական օրենսգրքի 249-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում գույքի առևանգման համար, որը կատարվել է տուժողի նկատմամբ ուժ կամ կյանքի համար վտանգավոր սպառնալիք գործադրելով: Նույն օրենսգրքի առանձին՝ 250 հոդվածով պատասխանատվություն է նախատեսված ծանրացուցիչ հանգամանքներում կատարված ավազակության համար, որի մեջ մտնում է զենքով կամ բանդայի կազմում ավազակություն կատարելը:

¹ *Ограбление* տերմինն ըստ ռուս-հայերեն բառարանի թարգմանվում է որպես կողոպուտ, սակայն շատ հաճախ մասնագիտական գրականության մեջ այն օգտագործվում է ավազակությունը բնորոշելու համար:

² Տե՛ս *Додонов В. Н., Капинус О. С., Щерба С. П.* Сравнительное уголовное право. Особенная часть. М., 2010, էջ 214:

Ավստրիայի քրեական օրենսգրքում առաձնացված են բռնի հափշտակության երկու ավագակության ձևեր՝ *ավագակություն (Raub) և ծանր ավագակություն (Schwerer Raub)*: Ընդ որում, ավագակություն է համարվում այլ անձի նկատմամբ բռնություն կյանքի կամ առողջության համար վտանգ ստեղծելու սպառնալիքով անձից ուրիշի շարժական գույքը վերցնելը կամ ստիպելը, գույքը նրան հանձնելը՝ իր կամ երրորդ անձի անօրինական հարստացման դիտավորությամբ, իսկ ծանր ավագակություն է համարվում բանդայի կազմում կամ զենքի գործադրմամբ ավագակություն կատարելը:

Ֆրանսիայում սեփականության դեմ ուղղված բոլոր հանցագործությունները, այդ թվում նաև ավագակությունը, միավորված են մեկ հասկացության մեջ՝ «vol»³, որը բնորոշվում է որպես այլ անձի գույքի վերցնելը:

Անգլիայի քրեական օրենսգրքում ավագակությունը բնութագրվում է որպես բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով գույքը վերցնելը:

Ստացվում է այնպես, որ գրեթե բոլոր երկրներում ավագակությունը նախատեսվում է նյութական հանցակազմի տեսքով:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 175 հոդվածի համաձայն՝ ավագակությունը ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հարձակումն է, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով: Այսինքն, գործող օրենսդրությամբ ավագակությունը նկարագրված է ձևական հանցակազմի տեսքով՝ ավագակությունն ավարտված է համարվում հարձակման պահից՝ անկախ գույքին տիրանալու հանգամանքից: Սակայն նման ձևակերպումը քննադատության է արժանացել մասնագիտական գրականության մեջ այն առումով, որ ավագակությունը համարվում է հափշտակության մի եղանակ, ուստի ավագակությանը պետք է բնորոշ լինեն հափշտակության բոլոր հատկանիշները, այդ թվում հափշտակության ավարտման պահը, այսինքն, հափշտակությունն ավարտված է համարվում, երբ հանցավորն իրական հնարավորություն ունի գույքը տնօրինելու կամ օգտագործելու: Այդ իսկ պատճառով է, որ մասնագիտական գրականության մեջ երբեմն ավագակությունն ավելի շուտ համարվում է սեփականության դեմ ուղղված այլ հանցագործություն, քան հափշտակություն⁴:

³ Իր իմաստային նշանակությամբ vol տերմինը համընկնում է հափշտակության հետ:

⁴ Տե՛ս **Кочий С. М.** Ответственность за корыстные преступления против собственности М., 2000, էջ 98:

Ավագակության՝ ձևական հանցակազմով նկարագրված լինելը կարելի է մասամբ հիմնավոր համարել այն հանգամանքով, որ ավագակության ավարտման պահը հանցավորձի փուլ տեղափոխելով՝ փորձ է արվել ուժեղացնել սեփականության և անձի քրեաիրավական պաշտպանությունը⁵:

Սակայն վիճակագրությունը ցույց է տալիս, որ ավագակության գրեթե բոլոր դեպքերում հանցագործները «ձեռնունայն» չեն հեռանում և երկու դեպքում էլ արարքը որակվում է որպես ավարտված ավագակություն՝ անկախ այն հանգամանքից, գույք հափշտակվել է, թե՛ ոչ: Սակայն կարծում ենք, միևնույն հարթության վրա չեն կարող գտնվել «ավագակություն-հարձակումը» և «ավագակություն-հափշտակությունը»: Նման որակման պայմաններում կխախտվի արդարության սկզբունքը: Թեև պետք է նշել, որ որոշ դեպքերում պատժի անհատականացման շրջանակներում դատարանները կարող են հաշվի առնել այն հանգամանքը, թե արդյոք ավարտված հափշտակություն տեղի ունեցել է, թե՛ ոչ: Սակայն նման պահանջը չի կարելի համարել օրենսդրական և պարտադիր բոլոր դատարանների համար: Այս առումով ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծով փորձ է արվել շտկել նման անհամապատասխանությունը՝ ավագակության հանցակազմը նկարագրելով նյութական հանցակազմի տեսքով: Այսպես, ըստ նախագծի 242 հոդվածի՝ ավագակությունը բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կատարված հափշտակությունն է:

Նախագծում տրված ձևակերպումից պարզ է դառնում, որ ավագակությունը համարվում է նյութական հանցակազմով հանցագործություն, այսինքն, ավարտված է համարվում, երբ հանցավորն իրական հնարավորություն ունի գույքը տնօրինելու կամ օգտագործելու: Թերևս նման կարգավորումն առավել ընդունելի է, քանի որ ավագակությունը համարվում է հափշտակության եղանակներից մեկը, ուստի դրան ևս պետք է բնորոշ լինեն հափշտակության բոլոր հատկանիշները, այդ թվում ավարտման պահը: Նախագծով, ի տարբերություն գործող օրենսգրքի, տրվել է նաև հափշտակության օրենսդրական սահմանումը: Ըստ նախագծի, հափշտակություն է համարվում ուրիշի գույքն ապօրինի, անհատույց վերցնելը՝ այն հանցավորինը կամ այլ անձինը դարձնելու նպատակով: Հափշտակությունն ավարտված է համարվում, եթե հանցավորն այդ

⁵ St' u Кригер Г. А. Квалификация хищения социалистического имущества. М., 1974, էջ 94:

գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել:

Բացի այդ, գոյություն ունի ևս մեկ հանգամանք, ինչը ևս վկայում է ավագակության՝ ըստ նախագծի տրված կարգավորման օգտին:

Հափշտակության այլ եղանակներից ավագակությունը տարբերվում է հանցագործության կատարման առանձնահատուկ եղանակով՝ հարձակում, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ այդպիսի բռնություն գործադրելու սպառնալիքով:

Այսինքն, ավագակության հանցակազմի առկայությունը պարզելու համար նախ պետք է հավաստել, որ առաջին հերթին առկա է հափշտակություն (իր բոլոր հատկանիշներով), երկրորդ՝ հափշտակության կատարման եղանակը, ինչպես նաև այդ երկու երևույթների միջև կապը, այսինքն այն, որ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությունը կամ այդպիսի բռնություն գործադրելու սպառնալիքով զուգորդված՝ հարձակումը կատարվել է հենց հափշտակության նպատակով:

Հարձակումը բնութագրվում է հանկարծակիությամբ, ագրեսիվությամբ, անսպասելիությամբ⁶: Ընդ որում, հարձակումը զուգորդվում է ֆիզիկական կամ հոգեկան բռնությամբ: Բռնությունը ենթադրում է տուժողի նկատմամբ ցանկացած միջամտություն նրա կամքի հաղթահարման համար, որը սահմանափակում է վերջինիս համապատասխան որոշում կայացնելու կամ համապատասխան գործողություն կատարելու հնարավորությունը: Ֆիզիկական բռնությունը ենթադրում է անմիջական ազդեցություն տուժողի ֆիզիկական ամբողջականության վրա կամ արտաքին խոչընդոտների միջոցով նրա ազատության սահմանափակում: Հոգեկան բռնությունն անձի կամային գործընթացների վրա ներազդելու միջոց է, որը կապված չէ մոլորության հետ: Այս համաստով թունավորման ցանկացած ձև, նույնիսկ խաբեության ճանապարհով այն տուժողի օրգանիզմ ներարկելը, իրենից ենթադրում է ոչ թե խաբեություն, այլ բռնություն⁷:

⁶ St' u Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / под. Ред. **А. И. Рапога**. М., 2004, էջ 272:

⁷ St' u **Богданчиков С. В.** Уголовно-правовые и криминологические аспекты преступлений против собственности. М., 2011, էջ 97:

Սակայն կարող է հարց առաջանալ, արդյո՞ք բոլոր դեպքերում է, որ հարձակումը պարտադիր է, քանի որ բոլոր այն դեպքերում, երբ, օրինակ, խաբեությամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր թույն է ներարկվում տուժողի օրգանիզմ, այնուհետև տեղի է ունենում գույքի հաշտակություն, փաստացիորեն հարձակումը բացակայում է, սակայն կատարվածը պետք է որակել որպես ավագակություն: Փաստորեն, ավագակության հանցակազմում կարևոր է ոչ թե հարձակման առկայությունը, այլ բռնության տեսակը, այն է՝ կյանքի կամ առողջության համար վտանգավոր: Ուստի այդ նկատառումներից ելնելով՝ նախագծով հարձակումը նախատեսված չէ որպես ավագակության օբյեկտիվ կողմի հատկանիշ:

Ի տարբերություն գործող քրեական օրենսգրքի, որտեղ ավագակության կատարման եղանակ է համարվում կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությունը կամ այդպիսի բռնություն գործադրելու սպառնալիքը, նախագծով ավագակության եղանակ է համարվում բռնություն գործադրելու կամ բռնություն գործադրելու սպառնալիքը՝ առանց կոնկրետացնելու բռնության տեսակը: Այսինքն, ըստ նախագծի, եթե նույնիսկ հափշտակություն կատարվի կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնությամբ, կատարվածը պետք է որակել որպես ավագակություն, իսկ գործող քրեական օրենսգրքի պայմաններում այն պետք է որակել որպես ծանրացնող հանգամանքներով կատարված կողոպուտ (ՀՀ քրեական օրենսգրքի 176 հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ): Այսինքն, նախագծով օրենսդրի տրամաբանությունը միտված է նրան, որ եթե բռնությամբ կամ դրա սպառնալիքով կատարվում է հափշտակություն, ապա այն իրենից բարձր հանրային վտանգավորություն է ներկայացնում, և արարքը ենթակա է որակման հափշտակության ամենավտանգավոր եղանակի՝ ավագակության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածով: Բացի այդ, նախագծով տրվել է նաև բռնության օրենսդրական սահմանումը՝ այն բնորոշելով որպես այլ մարդու նկատմամբ դիտավորյալ ֆիզիկական ներգործություն կամ նրան ֆիզիկական կամ հոգեկան վնասի պատճառում, որը կատարվում է նրա կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով:

Օրենսդրական նման ձևակերպման պայմաններում էականորեն կհետտացվի նաև իրավակիրառ պրակտիկայում ավագակությունը ծանրացնող հանգամանքներում կատարված կողոպուտից տարբերակելը, թեև ՀՀ վճռաբեկ դատարանը 2013թ. փետրվարի 15 որոշմամբ մասամբ ներկայացրել է այս 2

հանցագործությունները միմյանցից տարբերելու չափանիշները, սակայն, ամեն դեպքում, որակման առումով, կարծում ենք, դժվարություններ կլինեն⁸:

Ավագակության հանցակազմը նյութական հանցակազմի ձևով նկարագրելը նաև հնարավորություն կտա նախագծի պայմաններում կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դրա սպաննալիքով գուգորդված շորթումը հասակորեն տարանջատել ավագակությունից կամ ավագակության փորձից, հատկապես այն դեպքերում, երբ շորթումը և ավագակությունը հաջորդել են միմյանց:

Թե՛ գործող քրեական օրենսգրքով և թե՛ նախագծով ավագակությունը դրսևորվում է մեղքի դիտավորյալ ձևով, իսկ որպես սուբյեկտ կարող է համարվել 14 տարին լրացած, ֆիզիկական, մեղսունակ անձը:

Հատկանշական է, որ նախագծով փոխվել են նաև հափշտակության չափերը:

Եթե գործող օրենսդրությամբ հափշտակության (այդ թվում ավագակության) խոշոր չափ է համարվում նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից երեքհազարապատիկը չգերազանցող գումարը, իսկ առանձնապես խոշոր չափ է համարվում նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկը գերազանցող գումարը, ապա նախագծով հափշտակության խոշոր չափ է համարվում ամսական նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկը չգերազանցող գումարը, իսկ առանձնապես խոշոր չափ է համարվում ամսական նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկը գերազանցող գումարը: Իսկ ինչ վերաբերվում է հափշտակության, այդ թվում ավագակության զգալի չափի և խոշոր չափի տարանջատմանը, ապա դրա մասին նախագծով որևէ նշում չկա, կարծում ենք՝ դա ոչ թե օրենսդրական բաց է, այլ հափշտակության զգալի կամ խոշոր չափի որոշումը թողնվել է իրավակիրառ մարմինների հայեցողությանը, որոնք ելնելով կոնկրետ դեպքի հանգամանքներից, հատկապես տուժողի սոցիալական վիճակից, լիագործված են որոշելու հափշտակության չափը:

Նախագծով գրեթե պահպանվել են գործող օրենսգրքով նախատեսված ավագակության ծանրացնող և առաձնապես ծանրացնող հանգամանքները:

⁸ Տե՛ս << վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները քրեաիրավական նորմերի կիսաման վերաբերյալ: Ուսումնական ձեռնարկ, կազմ. Գ. Թ. Գրիգորյան, Մ. Մ. Մարկոսյան, Եր- 2015թ, էջեր 134-144:

Ավելացել են նաև մի շարք ծանրացնող հանգամանքներ, մասնավորապես.

1. առանձին դաժանությամբ,
2. անզգուշությամբ մահ պատճառելով,
3. հղի կնոջ կամ անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ,
4. տեխնիկական միջոցների, հատուկ հարմարեցված սարքավորումների կամ այլ առարկաների կամ միջոցների գործադրմամբ գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումները, համակարգերը կամ այլ միջոցները վնասելով, ոչնչացնելով կամ շրջանցելով ավազակություն կատարելը:

Պետք է նշել, որ նախագծով որպես ծանրացնող հանգամանք վերացել է պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելով ավազակություն կատարելը, սակայն կարծում ենք, պահեստարանից կամ շինությունից ավազակություն կատարվում է հիմնականում տեխնիկական միջոցների գործադրմամբ, ուստի նախագծով այն ենթակա է որակման որպես ծանրացնող հանգամանքներում կատարված ավազակություն:

Կազմակերպված խմբի կողմից ավազակություն կատարելը՝ որպես առանձնապես ծանրացնող հանգամանք, նախագծով փոխարինվել է հանցավոր կազմակերպության կողմից ավազակություն կատարելով: Դա ոչ միայն զուտ տերմինաբանական փոփոխություն է, այլ նաև՝ բովանդակային: Այսպես, եթե գործող օրենսդրությամբ կազմակերպված խումբ է համարվում մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար ձևավորված *երկու կամ ավելի* անձանցից բաղկացած կայուն խումբը, ապա նախագծով հանցավոր կազմակերպություն է համարվում մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար ստեղծված *երեք կամ ավելի* անձից բաղկացած կայուն խմբի կամ խմբերի միավորման կողմից: Ընդ որում, հանցանքը համարվում է հանցավոր կազմակերպության կողմից կատարված նաև այն դեպքում, երբ դա ստեղծած կամ ղեկավարող անձի դիտավորության մեջ ընդգրկված հանցանքն անմիջականորեն կատարել է խմբի թեկուզ մեկ անդամը կամ խմբի առաջադրանքով՝ դրա անդամ չհանդիսացող անձը:

Նախագծով ավելացել է ավազակության առանձնապես ծանրացնող հետևյալ հանգամանքը՝ պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաներ հափշտակելով ավազակություն կա-

տարելը: Նման ծանրացնող հանգամանքն ավելացել է առանձնակի արժեք ունեցող գույքի հափշտակության համար պատասխանատվություն նախատեսող հատուկ նորմի վերացմամբ, որը նախատեսված է գործող քրեական օրենսգրքի 180-րդ հոդվածում:

Պատժի չափի հարցում թե՛ գործող օրենսգրքով և թե՛ նախագծով օրենսդրի մոտեցումները նույնն են: Այսինքն, ավազակության հասարակ և ծանրացնող հանգամանքներում կատարված տեսակները համարվում են ծանր հանցագործություններ, իսկ առանձնապես ծանրացուցիչ հանգամանքներում կատարված ավազակությունը համարվում է առանձնապես ծանր հանցագործություն:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի ուժի մեջ մտնելու պայմաններում իրավակիրառը կարող է բախվել նաև այլ խնդրի հետ, մասնավորապես՝ արդյո՞ք նոր ընդունված օրենքը կարող է ունենալ հետադարձ ուժ և տարածվել մինչև այդ օրենքը հանցանք կատարած, պատիժ կրող կամ դատվածություն ունեցող անձանց նկատմամբ: Կարծում ենք, բոլոր այն դեպքերում, երբ գործող օրենսգրքի պայմաններում անձը կատարել է ավազակություն–հարձակում, այսինքն, հանցագործի կամքից անկախ հանգամանքներում փաստացի գույքի վերցնում տեղի չի ունեցել (գործող օրենսգրքի պայմաններում այն ենթակա է որակման որպես ավարտված ավազակություն), ապա նախագծի ընդունման պայմաններում այդ նորմը կունենա հետադարձ ուժ, քանի որ այդ նորմի պայմաններում ավազակություն–հարձակումը ենթակա է որակման որպես ավազակության փորձ, որի դեպքում՝ համաձայն չավարտված հանցագործության դեպքում պատիժ նշանակելու կարգի, ազատազրկման ձևով պատիժը չի կարող գերազանցել ազատազրկման ձևով առավելագույն պատժի երեք քառորդը: Իսկ այն բոլոր դեպքերում, երբ նոր օրենսգիրքը կվատթարացնի հանցանք կատարած անձի վիճակը, մասնավորապես՝ այնպիսի ծանրացնող հանգամանքներ ավելացնելով (օրինակ հղի կնոջ նկատմամբ կատարելը), որոնք հայտնի չեն գործող օրենսգրքին, ապա այդ մասով նոր օրենքը չի ունենա հետադարձ ուժ: Այսինքն, նոր օրենքի հետադարձ ուժ տալու կամ չտալու հարցը պետք է որոշել՝ ելնելով այն հանգամանքից, թե ընդհանուր առմամբ որքանո՞վ է այդ օրենքը, թեկուզ մասնակիորեն, բարելավում հանցանք կատարած անձի վիճակը:

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ թե՛ գործող քրեական օրենսգրքով և թե՛ նախագծով ավազակությունը համարվում է հափշտակության ամենա-

վտանգավոր եղանակը, քանի որ ավագակություն կատարող անձը միաժամանակ ոտնձգում է քրեախրավական պաշտպանության ներքո գտնվող երկու շահերի՝ սեփականության և կյանքի ու առողջության դեմ, սակայն նախագծում առկա ավագակության համար պատասխանատվություն նախատեսող քրեախրավական նորմի ձևակերպումը, որտեղ ավագակության հանցակազմը նկարագրված է նյութական հանցակազմի ձևով, մեր կարծիքով, առավել ընդունելի է: Բացի այդ հստակեցված է ավագակության դիսպոզիցիան, ինչի պայմաններում ավագակությունը հեշտ կլինի տարբերել բռնությամբ կատարվող կողոպուտից, ինչն էլ իր հերթին կնպաստի նաև պրակտիկայում քրեախրավական նորմի միատեսակ կիրառմանը:

ԱՎԱԶԱԿՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԽՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Մեկիքսության Արմինե

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
ոստիկանության փոխգնդապետ

Հոդվածում վերլուծված է ավագակության քրեախրավական բնութագիրն ըստ ՀՀ գործող քրեական օրենսգրքի և ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի: Հափշտակության ամենավտանգավոր եղանակը համարվում է ավագակությունը, որը ոտնձգում է երկու օբյեկտների, մի կողմից՝ սեփականության, մյուս կողմից՝ կյանքի ու առողջության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների դեմ:

ՀՀ գործող օրենսգրքով ավագակությունը նախատեսված է որպես ձևական հանցակազմով հանցագործություն, որն ավարտված է համարվում գույքը հաշվատակելու նպատակով հարձակման պահից՝ անկախ գույքին տիրանալու հանգամանքից: Իսկ նախագծով ավագակությունը նկարագրված է նյութական հանցակազմի ձևով:

Հեղինակի կարծիքով, նախագծով տրված ավագակության սահմանումն առավել ընդունելի է, բացի այդ պարզեցված է ավագակության դիսպոզիցիան, ինչի արդյունքում դժվարություն չի առաջանա ավագակությունը բռնությամբ

կատարվող կողոպուտից սահմանազատելու հարցում, ինչն էլ իր հերթին կնպաստի օրենքի միատեսակ կիրառմանը:

Բանալի բառեր. Ավագակություն, հարձակում, նյութական հանցակազմ, բռնություն, հափշտակություն, քրեաիրավական նորմ:

УГОЛОВНО-ПРАВОВАЯ ХАРАКТЕРИСТИКА РАЗБОЯ В СВЕТЕ ПРОЕКТА НОВОГО УК РА

Меликсетян Армине Сержиковна

Доцент кафедры уголовного права и криминологии Академии
Образовательного комплекса полиции РА,
кандидат юридических наук,
подполковник полиции

Самым опасным способом хищения является разбой, который посягает на два объекта: с одной стороны, на собственность, а с другой стороны на жизнь и здоровье.

В УК РА разбой описан в виде формального состава: разбой считается оконченным в момент нападения, независимо от факта завладения имуществом. Но такая формулировка в юридической литературе заслужила критику в том смысле, что разбою, как способу хищения, присущи типичные признаки хищения, в том числе и момент окончания, когда преступник имеет реальную возможность распоряжаться или воспользоваться имуществом. В связи с этим, проект нового УК РА сделал попытку уладить такое разногласие, описывая состав разбоя как материальный.

Таким образом, формулировка проекта положения уголовного законодательства, предусматривающая ответственность за разбой, по нашему мнению, наиболее приемлема. Кроме этого, выяснена диспозиция разбоя, при наличии которой легче будет отличить разбой от насильственного грабежа, который, в свою очередь, будет способствовать единообразному применению уголовно-правовой нормы на практике.

Ключевые слова: разбой, нападение, материальный состав, насилие, хищение, уголовно-правовая норма.

CRIMINAL LEGAL NATURE OF ASSAULT IN THE LIGHT OF THE DRAFT CRIMINAL CODE OF RA

Meliksetyan Armine

Associate professor of the Chair of Criminal Law and Criminology,
Academy of Educational Complex of Police of the RA, PhD in Law,
Police Lieutenant Colonel

The present article covers the criminal legal nature of assault according to the functioning Criminal Code of RA and the draft Criminal Code. Meanwhile, the elements of the assault have been analyzed through making parallels between the two legal regulations. At the end of the article the author has come to the conclusion that the new formulation of the criminal legal norm imposing penalty for assault in the draft Criminal Code is more acceptable, as it describes the elements of assault as material elements. Besides, according to the author, the disposition of assault is more clarified. In this case it will be easier to distinguish the assault from the robbery with violence which will contribute to the similar application of the criminal legal norm in practice.

Keywords: assault, attack, material elements, violence, theft, criminal legal norm.

СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЙ АНАЛИЗ НОРМ ОБ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЗА ФАЛЬСИФИКАЦИЮ ДОКАЗАТЕЛЬСТВ ПО УГОЛОВНОМУ ДЕЛУ ПО ЗАКОНОДАТЕЛЬСТВУ РЯДА ЗАРУБЕЖНЫХ СТРАН ПОСТСОЦИАЛИСТИЧЕСКОЙ И РОМАНО-ГЕРМАНСКОЙ ПРАВОВЫХ СЕМЕЙ

Свиридов Станислав Владимирович

адъюнкт факультета подготовки научно-педагогических

и научных кадров Московского университета

МВД России имени В.Я. Кикотя

Научный руководитель: Осокин Роман Борисович,

доктор юридических наук, доцент

Рассмотрение уголовного законодательства об ответственности за фальсификацию доказательств по уголовному делу в зарубежных государствах позволяет выявить общие и отличительные признаки УК РФ по регламентации ответственности за данное преступление, так как позитивный опыт конструирования нормы об уголовно-правовом запрете фальсификации доказательств по уголовному делу может быть полезен только в сравнении с уголовно-правовым запретом за совершение подобного деяния в других странах. К этому прибегают и иные авторы в рамках своих исследований [1-6].

В данной статье нами будут рассмотрены некоторые уголовные законы зарубежных стран, относящихся к постсоциалистической правовой семье (Республика Беларусь, Азербайджанская Республика, Республика Таджикистан, Республика Армения, Кыргызская Республика, Республика Молдова, Грузия, Республика Узбекистан, Туркменистан, Республика Казахстан).

Кроме постсоциалистической правовой семьи, нами будут также проанализированы уголовные законы некоторых зарубежных стран, входящих в романо-германскую правовую семью (Швеции, Франции, Дании, ФРГ, Голландии и Швейцарии).

Так, в ст. 395 УК Республики Беларусь предусматривается ответственность за фальсификацию доказательств [7, с. 418-419]. Диспозиция этой статьи УК Республики Беларусь также лаконична, как и диспозиция ст. 303 УК РФ [8], что не позволяет четко уяснить легальное толкование термина «фальсификация». Кроме того, как белорусский, так и российский законодатель запрещает фальсификацию доказательств по гражданскому делу, совершенную специальным субъек-

том (лицом, участвующим в деле либо его представителем), под угрозой альтернативной санкции, самое строгое наказание по которой определено в виде ареста сроком до 6 месяцев (ч. 1 ст. 395 УК Республики Беларусь).

Аналогично части 2 ст. 303 УК РФ, часть 2 ст. 395 УК Республики Беларусь запрещает совершение фальсификации доказательств по уголовному делу специальным субъектом-лицу, осуществляющему предварительное расследование, прокурору, судье и защитнику [7, с. 419]. При этом в ч. 3 ст. 395 УК Республики Беларусь содержится ответственность за совершение деяния, предусмотренного ч. 2 этой же статьи, если преступление повлекло тяжкие последствия [7, с. 419]. Как видно, белорусский законодатель расширяет перечень отношений в области доказывания по уголовным делам, подлежащих уголовно-правовой охране, так как относит к специальным субъектам судей. При этом белорусский законодатель, в отличие от российского, исключает из содержания соответствующего предписания защиту идентичных отношений в области гражданского судопроизводства, чем, по существу, устраняет квалифицированный состав фальсификации доказательств по гражданским делам.

Уголовный кодекс Азербайджанской Республики содержит ответственность за рассматриваемое нами деяние в ст. 294 [9, с. 301-302], где, однако, не раскрывается формально-логический объем объективной стороны состава преступления. В свою очередь ст. 294.2 УК Азербайджанской Республики исключает судей из числа специальных субъектов фальсификации доказательств по уголовным делам [9, с. 302].

При этом специальной нормы в УК Азербайджанской Республики, регламентирующей ответственность за фальсификацию результатов оперативно-розыскной деятельности, не имеется. Однако, ст. 302 рассматриваемого УК предусматривает ответственность за нарушение частных предписаний законодательства об оперативно-розыскной деятельности, криминализируя ее осуществление неполномоченным субъектом, без законных оснований, а также с незаконным использованием специальных технических средств [9, с. 309-310].

Анализ ст. 359 УК Республики Таджикистан [10, с. 359-360], ст. 349 УК Республики Армения [11, с. 687], ст. 326 УК Кыргызской Республики [12] и ст. 310 УК Республики Молдова [13] свидетельствует о сходном и однотипном установлении уголовной ответственности за фальсификацию доказательств по уголовным делам.

Наибольший интерес, с нашей точки зрения, представляет регламентация ответственности за рассматриваемое деяние по уголовному законодательству Грузии. Так, ст. 368 данного УК содержит наказание за уничтожение доказательств участником судопроизводства [14, с. 364], а ст. 369 УК Грузии запрещает фальси-

фикацию доказательств [14, с. 364-365]. Данный запрет типичен для ранее рассмотренных уголовных законов постсоветских стран. В ч. 2 ст. 369 УК Грузии предусматривается ответственность за фальсификацию доказательств по уголовным делам специальным субъектом [14, с. 364], при этом также регламентируется ответственность за совершение данного преступления, повлекшего тяжкие последствия по уголовному делу о тяжком либо особо тяжком преступлении [14, с. 365].

Уголовный кодекс Республики Узбекистан не содержит ответственности за фальсификацию доказательств по уголовному делу. Однако, в п. «а» ст. 327 УК Республики Узбекистан в качестве квалифицирующего признака ложного доноса предусматривается ответственность за искусственные доказательства обвинения [15, с. 259-260]. Такой же подход имеется и в уголовном законодательстве Республики Туркменистан, где в ч. 2 ст. 200 этого УК предусматривается ответственность за подобное деяние [16, с. 375-376].

Уголовный кодекс Республики Казахстан, в отличие от рассмотренных нами ранее уголовных законов некоторых стран постсоциалистической правовой семьи, содержит широко дифференцированный запрет фальсификации доказательств. Так, в ст. 416 УК Республики Казахстан, кроме того, содержится ответственность за фальсификацию доказательств по делам об административных правонарушениях (ч. 2 ст. 416), фальсификацию результатов оперативно-розыскных мероприятий (ч. 3 ст. 416), а также фальсификацию доказательств по гражданским, уголовным и административным делам, повлекшую вынесение неправосудного судебного акта (ч. 4 ст. 416) [17].

Рассмотрев некоторые уголовные кодексы стран, входящих в постсоциалистическую правовую семью по особенности регламентации ответственности за фальсификацию доказательств по уголовным делам, переходим к рассмотрению содержания норм об ответственности за подобное деяние в некоторых уголовных законах стран, относящихся к романо-германской правовой семье.

К примеру, в гл. 14 УК Швеции объединены 12 составов преступлений, связанных с фальсификацией [18, с. 108-115], в том числе подделка документа (ст. 1), тяжкая подделка документа (ст. 3), сокрытие документа, под которым понимается его перемещение, уничтожение либо приведение в непригодное для использования состояние (ст. 4) и подделка подписи (ст. 5).

При этом ответственность за подделку доказательств по уголовному делу закреплена в ст. 8 гл. 15 УК Швеции [18, с. 120], в диспозиции которой поясняется, что под этим деянием понимается подделка либо устранение доказательств, а также умышленное использование заведомо для виновного ложных доказательств в целях осуждения невиновного лица. Кроме того, ст. 9 УК Швеции предусматри-

вает еще один запрет – запрет предотвращения судебной ошибки по небрежности [18, с. 120-121], распространяющийся на все составы уголовно-наказуемых деяний, закрепленные в гл. 15, в том числе и на ст. 8.

Пункты 1,2 ст. 434-4 отдела I гл. IV УК Франции регламентируют ответственность за воспрепятствование установлению истины путем искажения, фальсификации или стирания следов, подбрасывания, перемещения или уничтожения предметов, а равно уничтожения, искажения, сокрытия или изъятия предметов либо документов, способных облегчить раскрытие преступления, поиск доказательств и осуждение виновных [19, с. 410-411]. При этом квалифицированный состав преступления связан со специальным статусом лица, к должностным обязанностям которого относится содействие установлению истины [19, с. 411].

В § 158 гл. 17 УК Дании предусмотрен запрет на ложное предоставление доказательств в суде [20, с. 140], не адресуя данное императивное предписание только лицам, которым по делу предъявлено обвинение [20, с. 140-141]. При этом § 164 [20, с. 142-143] содержит ответственность за уничтожение, искажение и устранение доказательства, а равно представление ложного доказательства в целях предъявления обвинения либо осуждения любому лицу за совершение преступления, в том числе с согласия лица, не совершавшего какое-либо определенное/определенные деяние/деяния, беря на себя соответствующую ответственность. В свою очередь, законодатель Дании предусмотрел общий статус субъекта в каждом из приведенных составов преступлений.

УК ФРГ в § 269 регламентировал уголовно-правовой запрет за подделку данных, значимых для получения доказательств, в результате чего может произойти искажение содержания полученных данных [21].

Законодатель Голландии в ч. 2 § 1 ст. 189 УК предусмотрел ответственность за умышленное уничтожение, сокрытие либо утаивание предметов преступного посягательства или орудий преступления, а также иных доказательств с целью скрыть событие преступления либо создать препятствия для досудебного и судебного производства по нему [22, с. 321], а равно в сокрытии, уничтожении, утаивании, создании препятствий для изъятия доказательств [22, с. 322].

Исходя из анализа ч. 5 ст. 110 УК Швейцарии [23, с. 159], можно сделать вывод, что раздел 11 УК Швейцарии содержит ответственность за подделку различных документов [23, с. 235-237] и иных объектов, и запрещает фальсификацию письменных, но не иных вещественных доказательств, что, по нашему мнению, является пробелом УК Швейцарии.

Таким образом, исходя из вышеизложенного, можно сделать следующий вывод, что в настоящее время в проанализированных уголовных законах стран пост-социалистической и романо-германской правовых семей, содержащих запреты фальсификации доказательств по уголовному делу, отсутствует единый подход

технико-юридического конструирования соответствующих норм, так как в уголовных законах одних государств содержится, помимо общей, еще и специальная норма, предусматривающая ответственность за различные формы и виды фальсификации доказательств (Республика Беларусь, Республика Таджикистан, Республика Молдова, Швеция и прочие государства), а в иных – все формы и виды фальсификации доказательств сосредоточены в одной норме, которая предусматривает ответственность в основном и квалифицированном составе преступного деяния (Республика Узбекистан, Республика Туркменистан).

СПИСОК ИСПОЛЬЗОВАННОЙ ЛИТЕРАТУРЫ:

1. Филькина М. А. Сравнительно-правовой анализ норм об ответственности за хищение культурных ценностей по российскому и зарубежному уголовному законодательству // Проблемы экономики и юридической практики. 2007. № 4. С. 120-121.
2. Курсаев А. В., Осокин Р. Б. Ответственность за похищение имущества с тел умерших или мест их захоронения по уголовному законодательству зарубежных стран и проблемы совершенствования ст. 244 УК РФ «Надругательство над телами умерших и местами их захоронений» // Международное публичное и частное право. 2011. № 4. С. 38-41.
3. Осокин Р. Б. Специфика криминализации общественно опасных деяний против нравственности по Уголовному кодексу Испании // Актуальные проблемы уголовного права, уголовного процесса, криминологии и уголовно-исполнительного права: теория и практика: материалы Международной научно-практической конференции (10-11 апреля 2012 г.). Тамбов: Издательский дом ТГУ им. Г.Р. Державина, 2012. С. 305-308.
4. Пунько А. О. Сравнительно-правовой анализ уголовного законодательства России и зарубежных стран об ответственности за похищение человека // Пробелы в российском законодательстве. 2013. № 1. С. 151-155.
5. Дядюн К. В. Регламентация ответственности за убийство матерью новорожденного ребенка: сравнительно-правовой анализ уголовного законодательства России и Скандинавских стран // Вопросы современной юриспруденции. 2015. № 47. С. 69-75.
6. Осокин Р. Б. Опыт уголовно-правового противодействия преступлениям против общественной нравственности в Великобритании // Общественная безопасность как уголовно-правовая и криминологическая категория: материалы Международной научно-практической конференции, посвященной 50-летию юбилею прокурору Тамбовской области, заведующего ка-

- федрой уголовного права и процесса, кандидата юридических наук Владимиру Ивановичу Торговченкову. Тамбов: Издательский дом ТГУ им. Г.Р. Державина, 2015. С. 144-147.
